# ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐ

## ԱՄՄ
## (Գլուխ 1)

**Բժշկական և ախտորոշիչ սարքավորումներ և բժշկական կահույք արգանդի պարանոցի քաղցկեղային և նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար, կազմված 2 Լոտից**

ԱՄՄ թիվ՝ **Լոտ 1-CR4/NCB/A-G/013-15/1**
**Լոտ 2-CR4/NCB/A-G/013-15/2**

Ծրագիր՝ **Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում**
**Վարկ No. 5222-ԱՄ**

Գնորդ՝ **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**

Երկիր՝ **Հայաստանի Հանրապետություն**

Հրապարակված է՝ 27.11.2015

Գլուխ 1

1. Բաժին I – Տվյալներ մրցույթի մասնակիցներին

2. Բաժին IV – Հայտի ձևեր

3. Բաժին V – Ընդունելի երկրներ

4. Բաժին VI – Բանկի քաղաքականություն – Խարդախություն և կոռուպցիա

5. Բաժին VIII – Պայմանագրի ընդհանուր պայմաններ

6. Բաժին X – Պայմանագրի ձևեր

# Բաժին I. Տվյալներ մրցույթի մասնակիցներին

## Բովանդակություն

**Ա. Ընդհանուր........................................................................................................5**

1. Հայտի շրջանակ.......................................................................................................5
2. Ֆինանսական միջոցների աղբյուր.........................................................................5
3. Խարդախություն և կոռուպցիա ..........................................................................6
4. Ընդունելի հայտատուներ ......................................................................................6
5. Ընդունելի ապրանքներ և հարակից ծառայություններ.......................................10

**Բ. Մրցութային փաստաթղթերի բովանդակություն ........................................ 11**

6. Մրցութային...............................................................................................................11
փաստաթղթերի մասեր ...........................................................................................11
7. Մրցութային..............................................................................................................12
փաստաթղթերի պարզաբանում..............................................................................12
8. Մրցութային փաստաթղթի փոփոխում ...................................................................12

**Գ. Հայտերի պատրաստում ..................................................................................... 13**

9. Հայտի պատրաստման ծախսեր..............................................................................13
10. Հայտի լեզու .............................................................................................................13
11. Հայտի բաղկացուցիչ փաստաթղթեր ....................................................................13
12. Հայտադիմումի ձև և գնացուցակներ ....................................................................15
13. Այլընտրանքային հայտեր.......................................................................................15
14. Հայտի գներ և զեղչեր ...............................................................................................15
15. Հայտի արժույթը և վճարումը.................................................................................17
16. Ապրանքների և ծառայությունների ընդունելիությունը հաստատող փաստաթղթեր.............................................................................................................17
17. Հայտատուի ընդունելիությունը և որակավորումը հաստատող փաստաթղթեր18
18. Հայտերի վավերականության ժամկետ ...................................................................19
19. Հայտի երաշխիք.......................................................................................................19

**Դ. Հայտերի ներկայացում և բացում .................................................................. 22**

21. Հայտերի կնքում և նշագրում.....................................................................................23
22. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ................................................................23

23. Ուշացրած հայտեր ....................23
24. Հայտերի հետ վերցնում, փոխարինում և փոփոխում ....................24
25. Հայտերի բացում ....................24

**Ե. Հայտերի գնահատում և համեմատում .................... 26**

26. Գաղտնիություն ....................26
27. Հայտերի պարզաբանում ....................27
28. Շեղումներ, վերապահումներ և բացթողումներ ....................27
29. Հայտերի համապատաս-խանելիության որոշում ....................27
30. Անհամապա-տասխանու-թյուններ, սխալներ և բացթողումներ ....................28
31.Մաթեմատիկական սխալների ուղղում ....................29
32. Հայտերի գնահատում ....................30
33. Հայտերի համեմատում ....................31
34. Հայտատուի որակավորում ....................31
35. Ցանկացած հայտ ընդունելու և ցանկացած կամ բոլոր հայտերը մերժելու Գնորդի իրավունք ....................32

**Զ. Պայմանագրի շնորհում .................... 32**

36. Պայմանագրի շնորհման չափանիշներ ....................32
37. Պայմանագրի շնորհման ժամանակ քանակների փոփոխման գնորդի իրավունք32
38. Պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցում ....................32
39. Պայմանագրի ստորագրում ....................33
40. Պայմանագրի կատարման երաշխիք ....................34

# Բաժին I. Տվյալներ մրցույթի մասնակիցներին

## Ա. Ընդհանուր

**1. Հայտի շրջանակ**

1.1 Կապված Հայտերի հրավերի հետ, ինչպես նշված է **Մրցույթի տվյալների աղյուսակում (ՄՏԱ)** Գնորդը թողարկում է այս Մրցութային փաստաթղթերը, VI Մասում նշված Ապրանքների և օժանդակ ծառայությունների մատակարարման համար՝ համաձայն VII Մասի՝ Պահանջվող ապրանքների ժամանակացույցի: Սույն Ազգային Մրցակցային Մրցույթի (ԱՄՄ) գնումների լոտերի (պայմանագրերի) անունը և համարը և քանակը **նշված են ՄՏԱ-ում:**

1.2 Այս Մրցութային փաստաթղթերում.

(ա) «գրավոր» տերմինը նշանակում է տեղեկացված գրավոր տեսքով (օրինակ՝ փոստ, էլ. փոստ, ֆաքս, տելեքս)՝ ստացման հաստատմամբ:

(բ) ելնելով բովանդակության պահանջից՝ «եզակի» տերմինը նշանակում է «հոգնակի» և հակառակը; և

(գ) «օր» նշանակում է օրացուցային օր:

**2. Ֆինանսական միջոցների աղբյուր**

2.1 **ՄՏԱ-ում նշված** Վարկառուն կամ Ստացողը (այսուհետ՝ «Վարկառու» դիմել է/ստացել է ֆինանսավորում (այսուհետ՝ «միջոցներ») Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից (IBRD) կամ Միջազգային Զարգացման Ընկերակցությունից (IDA) (այսուհետ՝ «Բանկ»)՝ **ՄՏԱ-ում նշված** ծրագրի ծախսերը իրականացնելու նպատակով: Վարկից ստացված հասույթի մի մասը Վարկառուն մտադիր է հատկացնել պայմանագրի շրջանակներում վճարումներին, որի համար թողարկվել է այս Մրցութային փաստաթուղթը:

2.2 Վճարումները կկատարվեն միայն Վարկառուի դիմումից և Բանկի կողմից ստացված հաստատումից հետո՝ Վարկառուի և Բանկի միջև կնքված Վարկային (կամ այլ ֆինանսական) համաձայնագրի պայմաններին համապատասխան: Վարկային (կամ այլ ֆինանսական) համաձայնագիրը արգելում է վարկային հաշվից որևէ

գումար հատկացնել անհատներին, ձեռնարկություններին կամ ապրանքների ներմուծման նպատակով, եթե այդպիսի վճարումները կամ ներմուծումները, ըստ Բանկի, արգելված է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշմամբ՝ նշված Միացյալ ազգերի կանոնադրության 7-րդ գլխում: Վարկառուից բացի ոչ մի այլ կողմ չունի իրավունքներ Վարկային (կամ այլ ֆինանսական) համաձայնագրի նկատմամբ և չի կարող հավակնել վարկի (կամ այլ ֆինանսական) միջոցներ ստանալու համար:

**3.Խարդախություն և կոռուպցիա**

3.1 Բանկը պահանջում է իր կողմից Բաժին VI-ում սահմանված խարդախ և կոռուպցիոն գործելակերպերին համապատասխանություն:

3.2 Հետամուտ լինելով այս քաղաքականությանը՝ մրցույթին մասնակիցները պետք է թույլ տան և խրախուսեն իրենց գործակալներին (հայտարարած կամ ոչ), ենթակապալառուներին, ենթախորհրդատուներին, ծառայություն մատուցողներին կամ մատակարարներին և Բանկին հնարավորություն տան ստուգել բոլոր հաշիվները, տվյալները և այլ փաստաթղթերը, որոնք կապված են դիմումի ներկայացման, հայտի ներկայացման հետ (նախաորակավորման դեպքում), և պայմանագրի կատարման հետ (պայմանագրի շնորհման դեպքում), և Բանկի կողմից նշանակված ստուգողների կողմից իրականացնել նրանց ստուգումը:

**4. Ընդունելի հայտատուներ**

4.1 Հայտատուն կարող է լինել ընկերություն, որը մասնավոր սուբյեկտ է, պետական սուբյեկտ՝ ենթակա ՏՄՄ 4.5-ին կամ այդ սուբյեկտների ցանկացած միավորում համատեղ ձեռնարկության (ՀՁ) ձևով առկա համաձայնագրի ներքո կամ մտադրության նամակով հիմնավորված այդպիսի համաձայնագրին միանալու մտադրությամբ: Համատեղ ձեռնարկության դեպքում բոլոր անդամները պետք է համատեղ և առանձին ենթակա լինեն պայմանագրի կատարմանը՝ համաձայն պայմանագրի պայմաններին: ՀՁ-ն պետք է ներկայացուցիչ նշանակի, որը մրցութային գործընթացում պետք է իրավասություն ունենա իրականացնել ամբողջ գործունեությունը ՀՁ-ի ցանկացած և բոլոր անդամների կողմից, և այն դեպքում, երբ ՀՁ-ին է շնորհվում պայմանագիրը, պայմանագրի կատարման

ընթացքում: ՀՁ-ի անդամների քանակական սահմանափակումներ չկան, **եթե դրանք նշված չեն ՄՏԱ-ում**:

4.2 Հայտատուն չպետք է ունենա շահերի բախում: Բոլոր այն հայտատուները, որոնք կունենան շահերի բախում, կզրկվեն մրցույթին մասնակցելու իրավունքից: Մրցութային գործընթացի նպատակով Հայտատուն կարող է շահերի բախում ունենալ, եթե Հայտատուն.

(a) Ուղղակիորեն կամ անուղղակիրորեն հսկում, հսկվում է կամ մեկ այլ Հայտատուի հետ մեկտեղ գտնվում է ընդհանուր հսկողության ներքո, կամ

(b) Մեկ այլ Հայտատուից ստանում կամ ստացել է որևէ ուղղակի կամ անուղղակի դոտացիա, կամ

(c) Մեկ այլ Հայտատուի նման ունի նույն օրինական ներկայացուցիչը, կամ

(d) Ուղղակիորեն կամ ընդհանուր երրորդ կողմերի հետ կապ ունի մեկ այլ Հայտատուի հետ, որը նրան դնում է մի իրավիճակում, երբ ազդում է մեկ այլ Հայտատուի հայտի վրա կամ ազդում է գնման այս գործընթացի հետ կապված Գնորդի որոշումների վրա, կամ

(e) Մրցութային այս գործընթացում մասնակցում է մեկից ավելի հայտում: Հայտատուի կողմից մեկից ավելի հայտում մասնակցությունը հանգեցնում է բոլոր այն մրցույթներում մասնակցության իրավունքից զրկման, որտեղ ներգրավված է տվյալ Հայտատուն: Այնուամենայնիվ, դա չի սահմանափակում միևնույն ենթակապալառուի մասնակցությունը մեկից ավելի մրցույթներին, կամ

(f) Փոխկապակցված անձանցից որևէ մեկը որպես խորհրդատու մասնակցել է դիզայնի կամ տեխնիկական մասնագրերի կազմման աշխատանքներին, որոնք հանդիսանում են մրցույթի առարկան, կամ

(g) Եթե փոխկապակցված անձանցից որևէ մեկը վարձվել է (կամ ներկայացվել է) Գնորդի կամ Վարկառուի կողմից Պայմանագրի իրականացման համար, կամ

(h) Ապահովելու է ապրանքներ, աշխատանքներ կամ ոչ խորհրդատվական ծառայություններ, որոնք առաջացել կամ ուղղակիորեն կապված են խորհրդատվական ծառայությունների հետ ՄՏԱ ՏՄՄ 2.1-ում նշված ծրագրի նախապատրաստման և իրականացման նպատակով, որը տրամարվել կամ տրամադրում է փոխկապակցված անձանցից որևէ մեկը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում կամ վերահսկվում է կամ այդ ընկերության հետ գտնվում է ընդհանուր հսկողության ներքո, կամ

(i) Սերտ գործարար կամ ընտանեկան կապ ունի Վարկառուի աշխատակազմի հետ (կամ ծրագրի իրակացման գրասենյակի, կամ վարկի կողմ հանդիսացող ստացողի հետ), որոնք (i) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված են մրցութային փաստաթղթերի կամ պայմանագրի մանրամասների կազմման մեջ և (կամ) այդ պայմանագրի հայտի գնահատման գործընթացքում, կամ (ii) կներառվեն այդ պայմանագրի իրականացման կամ վերահսկողության մեջ մինչև այդ հարաբերություններից բխող հակասությունը լուծվի Բանկի համար ընդունելի գնումների գործընթացով և պայմանագրի կատարման միջոցով

4.3 Հայտատուն կարող է ունենալ ցանկացած երկրի պատկանելիություն, որը ենթակա է սահմանափակումների՝ համաձայն ՏՄՄ 4.7 դրույթի: Հայտատուն ենթադրվում է, որ պետք է ունենա որևէ երկրի ազգային պատկանելիություն, եթե Հայտատուն բաղկացած է, ներառված կամ գրանցված և գործում է համաձայն տվյալ երկրի օրենսդրական դրույթների, ինչպես վկայում են միավորման վերաբերյալ հոդվածները (կամ բաղկացուցիչ մաս կազմելու կամ ասոցացման վերաբերյալ համարժեք փաստաթղթերը), ինչպես նաև կախված հանգամանքներից՝ գրանցման վերաբերյալ իր փաստաթղթերը: Այս չափորոշիչը պետք է նաև կիրառել առաջարկվող ենթակապալառուների կամ ենթախորհրդատուների ազգությունը որոշելու համար Պայմանագրի ցանկացած մասի, այդ թվում՝ առնչվող ծառայությունների համար:

4.4 Այն հայտատուն, որի հանդեպ Բանկը պատժամիջոցներ է կիրառել՝ համաձայն ՏՄՄ 3.1 դրույթի կամ համաձայն ՎԶՄԲ Փոխառություններով և ՄԶԱ Վարկերով և Դրամաշնորհներով ֆինանսավորվող Ծրագրերում Խարդախության և Կոռուպցիայի դեմ Պայքարի և Կանխարգելման մասին Բանկի Ուղեցույցի, անընդունելի կհամարվի Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրի շնորհման համար կամ այդպիսի պայմանագրից ֆինանսապես կամ այլ ձևով օգտվելու համար՝ Բանկի կողմից սահմանված ժամանակահատվածի ամբողջ ընթացքում: Մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկը գտնվում է **ՄՏԱ-ում նշված** էլեկտրոնային հասցեում:

4.5 Պետական հիմնարկ-ձեռնարկությունները Վարկառուի երկրում կարող են մասնակցել մրցույթին միայն այն դեպքում, եթե նրանք կարողանան հաստատել, որ (i) գտնվում են ֆինանսապես կամ իրավակազմակերպական անկախ կարգավիճակում, (ii) գործում են առևտրային օրենքների համաձայն և (iii) Գնորդից կախում ունեցող գործակալություն չեն հանդիսանում: Ընդունելի լինելու համար պետական հիմնարկ-ձեռնարկությունները պետք է Բանկի պահանջները բավարարելու նպատակով համապատասխան բոլոր փաստաթղթերի միջոցով, այդ թվում՝ Կանոնադրության և Բանկի կողմից պահանջվող այլ տեղեկությունների միջոցով սահմանեն, որ (i) այն իրավաբանական անձ է՝ կառավարությունից առանձին, (ii) ներկայումս չի ստանում էական դոտացիաներ կամ բյուջետային աջակցություն, (iii) գործում է ցանկացած առևտրային ձեռնարկության նման և մասնավորապես չի պարտադրվում իր հավելուրդը փոխանցել կառավարությանը, կարող է ձեռքբերել իրավունքներ և պարտավորություններ, միջոցներ փոխառել և ենթակա լինել փոխհատուցել իր պարտքերը և կարող է սնանկ հայտարարվել, և (iv) չի դիմում կառավարության վարչության կամ գործակալության կողմից շնորհվող պայմանագիր ստանալու համար, որն ըստ իրենց կողմից կիրառվող օրենքների կամ կանոնակարգերի հանդես է գալիս, որպես ձեռնարկության հաշվետու կամ վերահսկիչ

մարմին կամ հնարավորություն ունի իր ազդեցությունն ու հսկողությունը սահմանել ձեռնարկության կամ հաստատության վրա:

4.6 Հայտատուի գործողությունները չպետք է կասեցվեն Գնորդի/Վարկառուների կողմից Հայտի երաշխիքային հայտարարագրի գործողության արդյունքում:

4.7 Ընկերությունները և անհատները կարող են անընդունելի լինել, եթե այդպես նշված է Բաժին V-ում և ա) ելնելով օրենքից կամ այլ պաշտոնական կանոնակարգերից՝ Վարկառուի երկիրն արգելում է տվյալ երկրի հետ առևտրային հարաբերություններ, եթե Բանկը, բավարարվելով այդ բացառումով, չի կանխում ապրանքների մատակարարման կամ անհրաժեշտ աշխատանքների կամ ծառայությունների մասով պայմանագրերի կազմման համար արդյունավետ մրցակցություն, կամ բ) Միացյալ ազգերի անվտանգության խորհրդի որոշման հետ համապատասխանության ակտով ըստ Միացյալ ազգերի կանոնադրության Գլուխ VII-ի, Վարկառուի երկիրն արգելում է այդ երկրից ապրանքների ցանկացած ներմուծում կամ աշխատանքների կամ ծառայությունների մասով պայմանագրերի կնքում, կամ ցանկացած վճարում ցանկացած երկիր կամ տվյալ երկրի անձի կամ սուբյեկտի:

4.8 Հայտատուն պետք է ապահովի Գնորդի համար ընդունելի բավարար ապացույցներ, Գնորդի կողմից համապատասխան խնդրանք ներկայացնելու դեպքում:

**5. Ընդունելի ապրանքներ և հարակից ծառայություններ**

5.1 Բանկի կողմից ֆինանսավորվող և Պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող բոլոր ապրանքները և տրամադրվող ծառայությունները ծագումով կարող են լինել ցանկացած երկրից՝ համաձայն Մասի V-ի, Ընդունելի երկրներ:

5.2 Այս դրույթի նպատակների համար «ապրանք» տերմինի մեջ ներառվում են հումքը, սարքավորումները և արդյունաբերական արտադրանքները, իսկ «հարակից ծառայություններ» տերմինը ներառում է այնպիսի ծառայություններ ինչպիսին են ապահովագրումը,

տեղադրումը, ուսուցումը և նախնական սպասարկումը:

5.3 «Ծագում» տերմինը նշանակում է այն երկիրը, որտեղ ապրանքները արդյունահանվում, աճեցվում, արտադրվում կամ մշակվում են, կամ որտեղ, արտադրության, մշակման կամ բաղադրամասերի հավաքման միջոցով ստեղծվում է նոր առևտրայնորեն ճանաչված ապրանք, որն իր հիմնական բնութագրերով էապես տարբերվում է իր բաղադրամասերից:

## Բ. Մրցութային փաստաթղթերի բովանդակություն

**6. Մրցութային փաստաթղթերի մասեր**

Մրցութային Փաստաթղթերը բաղկացած են Մասեր 1-ից, 2-ից, որոնք ներառում են ստորև նշված բոլոր Բաժինները և պետք է մեկնաբանվեն ՏՄՄ դրույթ 8-ի համաձայն թողարկված ցանկացած Հավելվածի հետ համատեղ:

**Գլուխ 1**

- Բաժին I. Տվյալներ մրցույթի մասնակիցներին (ՏՄՄ)
- Բաժին IV. Հայտի ձևեր
- Բաժին V. Ընդունելի երկրներ
- Բաժին VI. Բանկի քաղաքականություն-Խարդախություն և կոռուպցիա
- Բաժին VIII. Պայմանագրի ընդհանուր պայմաններ (ՊԸՊ)
- Բաժին X. Պայմանագրի ձևեր

**Գլուխ 2**

- Բաժին II. Մրցույթի տվյալների աղյուսակ (ՄՏԱ)
- Բաժին III. Գնահատման և որակավորման չափորոշիչներ
- Բաժին VII. Պահանջվող ապրանքների ժամանակացույց
- Բաժին IX. Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ)

6.1 Գնորդի կողմից տրված Մրցույթի հրավերը Մրցութային փաստաթղթերի մաս չի կազմում:

6.2 Գնորդը պատասխանատու չէ Մրցութային փաստաթղթերի և պարզաբանման խնդրանքների արձագանքերի, նախամրցութային հանդիպումների արձանագրությունների (դրանց առկայության դեպքում), կամ Մրցութային փաստաթղթի հավելվածների ամբողջականության համար, եթե դրանք չեն ձեռք բերվել անմիջականորեն Գնորդից համաձայն ՏՄՄ դրույթ 8-ի: Որևէ հակասության դեպքում գերակայում են անմիջականորեն Գնորդից ձեռքբերված փաստաթղթերը:

6.3 Հայտատուն պետք է ամբողջությամբ ուսումնասիրի Մրցութային փաստաթղթերում առկա բոլոր ցուցումները, ձևերը, պայմանները և մասնագրերը իր հայտով ներկայացնի ամբողջ տեղեկատվությունը կամ փաստաթղթավորումը, ինչպես պահանջվում է Մրցութային փաստաթղթերում:

**7. Մրցութային Փաստաթղթերի պարզաբանում**

7.1 Հայտատուն, որը պահանջում է Մրցութային փաստաթղթերի որևէ պարզաբանում, պետք է գրավոր ձևով դիմի Գնորդին՝ **ՄՏԱ**-ում նշված Գնորդի հասցեով: Գնորդը գրավոր տեսքով կպատասխանի ցանկացած պարզաբանման դիմումի, որը ստացվել է մինչ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը: Գնորդը պետք է ուղարկի պատասխանի օրինակները բոլոր նրանց, ովքեր ձեռք են բերել Մրցութային փաստաթուղթ՝ ներառելով հարցման նկարագրությունը, բայց չնշելով դրա աղբյուրը, համաձայն ՏՄՄ 6.3 դրույթի: Այդ դեպքում, ինչպես նշված է **ՄՏԱ-ում**, Գնորդը պետք է անհապաղ հրապարակի իր արձագանքը **ՄՏԱ-ում նշված** վեբ էջում: Եթե պարզաբանումների արդյունքում Մրցութային փաստաթղթերում անհրաժեշտ է էական տարրեր փոփոխել, ապա Գնորդը պետք է կատարի փոփոխություն Մրցութային փաստաթղթում համաձայն ՏՄՄ-ի 8 դրույթի և 22.2 ենթադրույթի:

**8. Մրցութային փաստաթղթի փոփոխում**

8.1 Հայտերի ներկայացման վերջնաժամկետից առաջ ցանկացած պահին, Գնորդը կարող է փոփոխություն կատարել Մրցութային փաստաթղթերում՝ հավելվածի

տեսքով:

8.2 Յուրաքանչյուր թողարկված հավելված կկազմի Մրցութային փաստաթղթերի մաս և բոլոր նրանք, ովքեր Մրցութային փաստաթղթերը ստացել են անմիջականորեն Գնորդից, գրավոր ձևով կտեղեկացվեն դրանց մասին, համաձայն ՏՄՄ 6.3-ի: Գնորդը պետք է նաև անհապաղ հրապարակի հավելվածը Գնորդի վեբ էջում, համաձայն ՏՄՄ 7.1 դրույթի:

8.3 Գնորդը, իր հայեցողությամբ, կարող է երկարացնել հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ հնարավոր Հայտատուներին՝ հայտերը պատրաստելու ընթացքում փոփոխությունները հաշվի առնելու համար բավարար ժամանակ տրամադրելու նպատակով: (ՏՄՄ, ենթազլուխ 22.2):

## Գ. Հայտերի պատրաստում

**9. Հայտի պատրաստման ծախսեր**

9.1 Հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը պետք է կրի Հայտատուն, իսկ Գնորդը պատասխանատու կամ իրավասու չէ այդ ծախսերի համար՝ անկախ մրցույթի անցկացման ընթացքից կամ արդյունքից:

**10. Հայտի լեզու**

10.1 Հայտատուի կողմից ներկայացված հայտը, ինչպես նաև հայտին վերաբերող ամբողջ նամակագրությունը և փաստաթղթերը պետք է գրված լինեն **ՄՏԱ-ում նշված** լեզվով: Հայտի մաս կազմող լրացուցիչ փաստաթղթերը և տպագրված գրականությունը կարող են լինել այլ լեզվով, եթե առկա է դրանց համապատասխան մասերի/ պարբերությունների պատշաճ թարգմանությունը՝ **ՏՄԱ-ում նշված** լեզվով, որի դեպքում, Հայտի մեկնաբանման պարագայում կգերակայի այդ թարգմանությունը:

**11. Հայտի բաղկացուցիչ փաստաթղթեր**

11.1 Հայտը բաղկացած է հետևյալ փաստաթղթերից՝

(ա) Հայտադիմումի ձև՝ համաձայն ՏՄՄ 12 դրույթի,

(բ) գնացուցակ՝ լրացված ՏՄՄ-ի 12 և 14 դրույթների համաձայն,

(գ) Հայտի երաշխիք կամ Հայտի երաշխիքային

հայտարարագիր, համաձայն ՏՄՄ-ի 19.1 դրույթի,

(դ) առկա չէ,

(ե) համաձայն ՏՄՄ-ի 20.2 դրույթի, Հայտատուի կողմից տրամադրած Հայտը ներկայացնելու գրավոր լիազորագիր,

(զ) փաստաթղթային հիմնավորում առ այն, որ իր հայտի ընդունման դեպքում Հայտատուն ունի պայմանագիրը կատարելու համապատասխան որակավորում՝ ՏՄՄ-ի 17-րդ հոդվածի համաձայն,

(է) փաստաթղթային հիմնավորում առ այն, որ Հայտատուն ընդունելի է՝ ՏՄՄ-ի 17-րդ դրույթի համաձայն,

(ը) փաստաթղթային հիմնավորում առ այն, որ Հայտատուի կողմից մատակարարվելիք ապրանքները և օժանդակ ծառայությունները ընդունելի են՝ համաձայն ՏՄՄ-ի 16-ի,

(թ) փաստաթղթային հիմնավորում առ այն, որ ապրանքները և տրամադրվող ծառայությունները համապատասխանում են Մրցութային փաստաթղթերի պահանջներին՝ համաձայն ՏՄՄ-ի 16 և 30-ի,

(ժ) **ՄՏԱ-ով պահանջվող** ցանկացած այլ փաստաթուղթ:

11.2 Ի հավելումն ՏՄՄ-ի 11.1 դրույթով սահմանված պահանջներին՝ ՀՁ-ով ներկայացված հայտերը պետք է ներառեն բոլոր անդամների կողմից Համատեղ ձեռնարկության համաձայնագրի պատճեն: Որպես այլընտրանք, հաղթող ճանաչված հայտի դեպքում Համատեղ ձեռնարկության համաձայնագրի իրականացման նպատակով բոլոր անդամների կողմից ստորագրվում է մտադրության նամակ և ներկայացվում է հայտի հետ առաջարկված համաձայնագրի պատճենի հետ միասին:

11.3 Հայտի ձևում Հայտատուն պետք է տրամադրի Հայտի հետ առնչվող որևէ կողմին կամ գործակալներին վճարված կամ վճարվելիք կոմիսիոն վճարների և դրամական պարգևների մասին տեղեկություններ, եթե այդպիսիք

գոյություն ունեն:

**12. Հայտադիմումի ձև և գնացուցակներ**

12.1. Հայտատուն պետք է ներկայացնի հայտադիմումի ձևը՝ օգտագործելով IV Մասում ներկայացված Հայտի օրինակելի ձևերը: Այդ ձևը պետք է լրացնել առանց ֆորմատում որևէ փոփոխություններ կատարելու: Ոչ մի փոխարինող հայտադիումումի ձևեր չեն ընդունվի, համաձայն ՏՄՄ 20.2-ի: Բոլոր չլրացված կետերը պետք է լրացնել պահանջվող տեղեկատվությամբ:

**13. Այլընտրանքային հայտեր**

13.1. Առկա չեն:

**14. Հայտի գներ և զեղչեր**

14.1 Հայտադիմումի ձևում և Գնացուցակում Հայտատուի կողմից նշված գները և զեղչերը պետք է համապատասխանեն ստորև բերված պահանջներին:

14.2 Գնացուցակներում պետք է առանձին-առանձին նշված/թվարկված լինեն բոլոր լոտերը (պայմանագրերը):

14.3 Հայտադիմումի ձևում նշվելիք գինը պետք է լինի հայտի ընդհանուր/ամբողջ գինը, որը բացառում է ցանկացած առաջարկվող զեղչ, համաձայն ՏՄՄ 12.1-ի:

14.4 Հայտատուն պետք է նշի ցանկացած զեղչ և նշի դրա կիրառման մեթոդաբանությունը Հայտադիմումի ձևում, համաձայն ՏՄՄ 12.1-ի:

14.5 Հայտատուի կողմից նշված գները պետք է ֆիքսված լինեն Պայմանագրի կատարման ընթացքում և չեն ենթարկվի որևէ փոփոխության:

14.6 ՄՏԱ 1.1 ենթակետով հատկորոշված լինելու դեպքում, հայտատուներին կառաջարկվեն անհատական լոտեր (պայմանագրեր), կամ լոտերի (փաթեթների) այլ համակցումներ: Գնանշումը պետք է 100%-ով համապատասխանի ամեն լոտի ապրանքատեսակներին և դրանցում սահմանված քանակին, եթե այլ կերպ **սահմանված չէ ՄՏԱ-ում**: Այն հայտատուները, ովքեր կցանկանան առաջարկել գների իջեցում մեկից ավելի պայմանագրի դեպքում, պետք է նշեն դա՝ պայմանով, որ բոլոր լոտերի (պայմանագրերի) համար ներկայացված հայտերը

ներկայացվում և բացվում են միաժամանակ, համաձայն ՏՄՄ 14.4-ի:

14.7 Առկա չէ:

14.8 Գները պետք է նշվեն համաձայն IV Մասում (Հայտի ձևեր) ընդգրկված յուրաքանչյուր Գնացուցակի: Գնային բաղադրիչների տարանջատումն անհրաժեշտ է միայն Գնորդին իրազեկման համար, և մաթեմատիկական ատուգում չի կատարվելու: Գները պետք է հիմնվեն <<Առաքված վերջնական նշանակման վայր>> և պետք է մուտք լինեն հետևյալ ձևով.

(i) EXW (ex աշխատանքներ, ex գործարան, ex տարածք, ex ցուցահանդես կամ դարակի) պայմանով առաքվող ապրանքների գինը՝ ներառյալ արդեն վճարված կամ վճարվելիք մաքսատուրքերը, վաճառքի և այլ հարկերը, որոնք վերաբերում են Ապրանքների արտադրության և հավաքման բաղադրիչներին և հումքին,

(ii) Գնորդի երկրում ցանկացած վաճառքի կամ այլ հարկեր, որոնք կհարկվեն ապրանքներից, եթե Հայտատուին ծնորհվի պայմանագիր, և

(iii) երկրի ներսում փոխադրումների, ապահովագրման և այլ տեղական ծառայությունների գներ, կապված վերջնական նշանակման վայր (Ծրագրի իրականացման վայր) ապրանքների տեղափոխման հետ՝ **ՄՏԱ-ի համաձայն:**

14.9 Հարակից ծառայությունների համար, վերզետնյա Հարակից ծառայությունների, վերգետնյա տեղափոխման և Ապրանքների վերջնակետ ուղեկցման այլ ծառայությունների համար, եթե նման հարակից ծառայություններ նշված են Պահանջների ցանկում.

(i) Հարակից ծառայություններից յուրաքանչյուր ապրանքի գինը (ներառյալ

գործող հարկերը):

**15. Հայտի արժույթը և վճարումը**

15.1 Հայտատուն գնանշում և վճարում կկատարի Գնորդի՝ **ՄՏՍ-ում սահմանված Երկրի արժույթով**:

**16. Ապրանքների և ծառայություններ ի ընդունելիություն ը հաստատող փաստաթղթեր**

16.1 Ապրանքների և օժանդակ ծառայությունների ընդունելիությունը հաստատելու նպատակով՝ համաձայն ՏՄՄ-ի 5-րդ հոդվածի, Հայտատուները պետք է լրացնեն Գնացուցակի ձևերում ապրանքների ծագման երկրի մասին հայտարարագիր (Բաժին IV, Հայտի ձևեր):

16.2 Ապրանքների և օժանդակ ծառայությունների համապատասպանությունը Մրցութային փաստաթղթերին հաստատելու նպատակով, Հայտատուն պետք է որպես իր Հայտի մաս ներկայացնի փաստաթղթային հիմնավորում առ այն, որ Ապրանքները համապատասխանում են VII Մասում (Պահանջվող ապրանքների ժամանակացույց) ամրագրված տեխնիկական մասնագրերին և չափանիշներին:

16.3 Ապրանքների և ծառայությունների մրցութային փաստաթղթերին համապատասխանությունը արտահայտող փաստաթղթային վկայությունը կարող է ներկայացված լինել տեքստի, գծագրերի կամ թվային տվյալների ձևով և պետք է ներառի ապրանքների տեխնիկական և աշխատանքային հիմնական չափանիշների մանրամասն նկարագրությունը, ինչպես նաև հաստատի, որ Ապրանքները և Հարակից Ծառայությունները ըստ էության համապատասխանում են տեխնիկական մասնագրերին, և եթե կիրառելի է, ներկայացնի Պահանջվող ապրանքների ցուցակի դրույթներից շեղումների կամ բացառությունների վերաբերյալ հայտարարություն Մաս VII (Պահանջվող ապրանքների ժամանակացույց):

16.4 Հայտատուն նաև կներկայացնի ցուցակ, որտեղ առկա կլինեն բոլոր այն մանրամասները, որոնք վերաբերում են անհրաժեշտ պահեստամասերին, հատուկ գործիքների և այլ նյութերի առկա աղբյուրներին ու ընթացիկ գներին և այլն, որոնք անհրաժեշտ են Ապրանքների, որոնք անհրաժեշտ են Ապրանքների պատշաճ և շարունակական աշխատանքի համար **ՄՏՍ-ում նշված** ժամանակահատվածի համար՝ Գնորդի կողմից

ապրանքների օգտագործումը սկսելուց հետո:

16.5 Տեխնիկական բնութագրերում ներառված պահանջվող որակավորման, հումքի և սարքավորումների չափանիշները, ինչպես նաև հղումները մակնիշներին կամ կատալոգի համարներին կրում են նկարագրական և չսահմանափակող բնույթ: Հայտատուն իր Հայտի մեջ կարող է ներկայացնել այլընտրանքային չափանիշներ, մակնիշներ և/կամ կատալոգի համարներ, պայմանով, որ Գնորդի պահանջները բավարարված են այն առումով, որ այդ փոխարինումներն էականորեն համարժեք են կամ գերակայում են Բաժին VII, Պահանջվող ապրանքների ցուցակում նշված պահանջներին:

**17. Հայտատուի ընդունելիություն ը և որակավորումը հաստատող փաստաթղթեր**

17.1 ՏՄՄ-ի 4-րդ դրույթի համապատասխան, իրենց ընդունելիությունը հաստատելու նպատակով Հայտատուները պետք է լրացնեն հայտադիմումի ձևը (Բաժին IV, Պայմանագրի ձևեր):

17.2 Փաստաթղթային հիմնավորում առ այն, որ իր հայտի ընդունման դեպքում Հայտատուն ունի պայմանագիրը կատարելու որակավորում՝ Գնորդին հավաստիացնելով հետևյալում.

(ա) որ, **ՄՏԱ-ում** որպես պահանջ լինելու դեպքում, եթե առաջարկվող ապրանքները չեն արտադրվում Հայտատուի կողմից, նա պետք է ներկայացնի Արտադրողի լիազորագիր, որը լրացված կլինի Բաժին IV-ում (Հայտի ձևեր) ներառված ձևը և որը կհաստատի, որ նա պատշաճ կերպով լիազորված է արտադրողի կողմից՝ այդ ապրանքները մատակարարելու Գնորդի երկիր,

(բ) որ, համաձայն **ՄՏԱ-ի պահանջի**, եթե Մասնակիցը ներկայումս չի աշխատում Գնորդի երկրում, ապա պայմանագիրը շնորհելու դեպքում այդ երկրում նրան ներկայացնում է, կամ պետք է ներկայացնի իր Գործակալը, որը իրազոր կլինի իրականացնել Պայմանագրի պայմաններում, կամ Տեխնիկական մասնագրերում նշված սպասարկման ծառայությունները, վերանորոգման աշխատանքները և պահեստամասերի տրամադրումը, և

(զ) որ Հայտատուն համապատասխանում է III Բաժնում ամրագրված Գնահատման և որակավորման չափանիշների:

**18. Հայտերի վավերականության ժամկետ**

18.1. Հայտերը պետք է վավեր լինեն՝ Գնորդի կողմից նշված ժամանակահատվածում, որը **սահմանված է ՄՏԱ-ում,** հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, համաձայն ՏՄՄ 22.1-ի: Վավերականության ավելի կարճ ժամանակահատված ունեցող հայտը կմերժվի Գնորդի կողմից՝ որպես պահանջներին չհամապատասխանող:

18.2. Բացառիկ հանգամանքներում, մինչ հայտի վավերականության ժամկետի սպառումը, Գնորդը կարող է խնդրել Հայտատուի համաձայնությունը վավերականության ժամկետն երկարաձգելու համար: Դիմումը և պատասխանները պետք է ներկայացվեն գրավոր: Եթե Հայտի երաշխիքը ներկայացվում է՝ համաձայն ՏՄՄ-ի 19-րդ դրույթի, ապա այն պետք է երկարաձգվի համապատասխան ժամանակահատվածով: Հայտատուն կարող է մերժել այդ խնդրանքը՝ առանց իր Հայտի երաշխիքը բռնագանձման ենթարկելու: Նման խնդրանքը բավարարող Հայտատուից չի պահանջվի կամ նրան չի թույլատրվի փոփոխել իր հայտը, բացառությամբ ՏՄՄ 18.3 դրույթում նախատեսված պայմանների:

18.3. Եթե պայմանագրի շնորհումը հետաձգվում է առաջարկի ուժի մեջ լինելու նախնական ժամկետից հետո ավելի քան հիսունվեց (56) օրով, պայմանագրի գինը կարգավորվում է հետևյալ կերպ.

(a) Պայմանագրի գինը պետք է լինի հայտի գինը՝ ճշգրտված **ՄՏԱ-ում** նշված գործոնին համապատասխան:

(b) Ցանկացած դեպքում, հայտի գնահատումը պետք է հիմնված լինի հայտի գնի վրա՝ առանց հաշվի առնելու վերը նշված կիրառելի ուղղումը:

**19. Հայտի երաշխիք**

19.1. Հայտատուն, որպես հայտի մաս, պետք է ներկայացնի Հայտի երաշխիքային հայտարարագիր կամ Հայտի երաշխիք՝ **ՄՏԱ-ի համաձայն,** բնօրինակով, իսկ հայտի երաշխիքի դեպքում՝ **ՄՏԱ-ում նշված** չափով և

արժույթով:

19.2. Հայտի երաշխիքային հայտարարագիրը պետք է օգտագործի Բաժին IV-ում (Հայտի ձևեր) զետեղված ձևը:

19.3. Եթե հայտի երաշխիքը նշված է համաձայն ՏՄՄ 19.1-ի, հայտի երաշխիքը պետք է լինի պահանջի երաշխավորություն Հայտատուի հայեցողությամբ հետևյալ ձևերից որևէ մեկով.

(a) Գնորդի երկրի Բանկի կամ ֆինանսական հաստատության կողմից տրված առանց պայմանների երաշխիք, (ինչպես օրինակ՝ ապահովագրում, պարտավորությունների կիսում կամ երաշխիքային ընկերություն),

(b) Անվերադարձ ակրեդիտիվներ,

(c) Գանձապահական կամ երաշխավորված չեքեր, կամ

(d) **ՄՏԱ-ում նշված** այլ երաշխիք,

Հեղինակավոր հաստատության կողմից և տեղակայված լինի ցանկացած ընդունելի երկրում: Բանկային երաշխիքի դեպքում, հայտի երաշխիքը պետք է ներկայացնել կամ IV Բաժնում (Հայտի ձևեր) Հայտի երաշխիքի ձևերից մեկով կամ մինչև հայտի ներկայացումը Գնորդի կողմից հաստատված այլ էականորեն նման ձևաչափով: Հայտի երաշխիքը ուժի մեջ է հայտերը ուժի մեջ լինելու ժամանակահատվածից հետո քսանութ (28) օրվա ընթացքում, կամ եթե պահանջվում է ցանկացած երկարաձգված ժամկետից հետո, համաձայն ՏՄՄ 18.2 դրույթի:

19.4. Եթե, համաձայան ՏՄՄ-ի 19.1 ենթադրույթի, պահանջվում է Հայտի երաշխիք կամ Հայտի երաշխիքային հայտարարագիր, և եթե դրանք չեն ներկայացվում Հայտի հետ, ապա Հայտը անհընդունելի կհամարվի և կմերժվի Գնորդի կողմից:

19.5. Եթե Հայտի երաշխիք է նշված, համաձայն ՏՄՄ 19.1 ենթադրույթի, Հաղթող չճանաչված Հայտատուների Հայտի երաշխիքը պետք է վերադարձվի հնարավորինս

արագ, հաղթող ճանաչված Հայտատուի՝ Հայտի իրականացման երաշխիքի ներկայացման պես՝ համաձայն ՏՄՄ-ի 40-րդ դրույթի:

19.6. Հաղթող ճանաչված հայտատուների Հայտի երաշխիքը պետք է վերադարձվի հնարավորինս արագ հաղթող ճանաչված Հայտատուի կողմից պայմանագրի ստորագրումից և Հայտի իրականացման երաշխիքը ներկայացնելուց հետո:

19.7. Հայտի երաշխիքը կարող է բռնագանձվել կամ Հայտի երաշխիքային հայտարարագիրը կարող է գործադրվել.

(ա) եթե Հայտատուն հետ վերցնի իր առաջարկը Հայտադիմումի ձևում իր կողմից նշված Հայտի վավերականության ժամանակահատվածում կամ Հայտատուի կողմից տրամադրած որևէ երկարացված ժամկետում, կամ

(բ) եթե հաղթող ճանաչված Հայտատուն չկարողանա.

(i) ստորագրել/կնքել Պայմանագիր՝ համաձայն ՏՄՄ-ի 39-րդ դրույթի, կամ

(ii) ներկայացնել Պայմանագրի կատարման երաշխիք՝ համաձայն ՏՄՄ-ի 40-րդ դրույթի:

19.8. Համատեղ ձեռնարկության (ՀՁ) Հայտի երաշխիքը և Հայտի երաշխիքային հայտարարագիրը պետք է լինեն Հայտը ներկայացնող ՀՁ-ի անունով: Եթե հայտը ներկայացնելու պահին, ՀՁ-ն իրավաբանորեն կազմավորված չէր, ապա Հայտի երաշխիքը և Հայտի երաշխիքային հայտարարագիրը պետք է լինեն բոլոր ապագա գործընկերների անունից, ինչպես նշված է մտադրությունների մասին նամակում, (ՏՄՄ 4.1 և ՏՄՄ 11.2):

19.9. Եթե **ՄՏԱ-ի համաձայն,** չի պահանջվում հայտերի երաշխիք, համաձայն ՏՄՄ 19.1 ենթադրույթի, և

(a) (ա) եթե Հայտատուն հետ է վերցնում իր առաջարկը Հայտի Ձևի նամակում Հայտատուի կողմից դրա ուժի մեջ լինելու ժամկետի ընթացքում, կամ

(b) եթե հաղթող Հայտատուն չստորագրի Պայմանագիրը, համաձայն ՏՄՄ 39-ի, կամ չներկայացնի Պայմանագրի Կատարման Երաշխիքը՝ ՏՄՄ 40-ի,

ապա **ՄՏԱ-ում սահմանված լինելու դեպքում**՝ Փոխառուն կարող է, հայտարարել, որ Հայտատուն որակազրկված է և Գործատուն չի կարող նրան Պայմանագիր շնորհել ՄՏԱ-ում նշված ժամանակահատվածի ընթացքում:

**20. Հայտի ձև և ստորագրում**

20.1 Հայտատուն պետք է պատրաստի հայտի բաղկացուցիչ փաստաթղթերի մեկ բնօրինակ՝ համաձայն ՏՄՄ-ի 11-րդ դրույթի և դրանց վրա հստակ նշի «ԲՆՕՐԻՆԱԿ»: Ինչպես նաև, Հայտատուն պետք է հայտի օրնակները ներկայացնեի **ՄՏԱ-ում** նշված քանակով և դրանց վրա հստակ նշի «Պատճեն»: Բնօրինակի և մյուս օրինակների միջև անհամապատասխանության դեպքում, գորակշռելու է բնօրինակը:

20.2 Հայտի բնօրինակը և բոլոր օրինակները պետք է տպված կամ գրված լինեն չջնջվող թանաքով և պետք է ստորագրված լինեն Հայտատուի անունից՝ համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից: Այդ լիազորությունը պետք է բաղկացած լինի **ՄՏԱ-ում նշված** գրավոր հաստատումից և պետք է կցված լինի հայտին: Լիազորրությունը ստորագրող յուրաքանչյուր անձի անունը և պաշտոնը պետք է տպել ստորագրության տակ: Հայտի բոլոր այն էջերը, որտեղ կատարվել են մուտքեր կամ փոփոխություններ, պետք է ստորագրել կամ նշել հայտը ստորագրողի անվան սկզբնատառերը:

20.3 Եթե Հայտատուն ՀՁ է, Հայտը պետք է ստորագրի ՀՁ-ի լիազոր ներկայացուցիչը ՀՁ-ի անունից, որը և պարտադիր է բոլոր անդամների համար լիազորագրով հիմնավորված, որը ստորագրված է օրենքով լիազորված ներկայացուցիչների կողմից:

20.4 Հայտում ցանկացած լրացումը, ջնջումը կամ փոփոխությունը օրինական է, եթե այն ստորագրված է Հայտը ստորագրող անձի կողմից:

## Դ. Հայտերի ներկայացում և բացում

**21. Հայտերի կնքում և նշագրում**

21.1. Հայտատուն պետք է ներկայացնի Հայտի բնօրինակը և բոլոր պատճենները առանձին կնքված ծրարներում, եթե դրանք թույլատրվում են ՏՄՄ-ի 13-րդ դրույթով: Դրանք պետք է նշագրված լինեն «ԲՆՕՐԻՆԱԿ» և «ՊԱՏՃԵՆ»: Բնօրինակ և պատճեններ պարունակող ծրարները պետք է մեկ ընդհանուր ծրարի մեջ դրած լինեն:

21.2. Ներքին և արտաքին ծրարները պետք է.

Պարունակեն Հայտատուի անունը և հասցեն,

(բ) Հասցեագրված լինեն Գնորդին՝ համաձայն ՏՄՄ-ի 24.1-րդ ենթադրույթի;

(գ) պարունակեն այս մրցույթի տարբերիչ նշանը/համարը, որը նշված է ՏՄՄ-ի 1.1 դրույթում, և

(դ) պարունակեն մինչև հայտի բացման ժամկետը հայտը չբացելու նախազգուշացում:

21.3. Եթե բոլոր ծրարները կնքված և նշագրված չեն ըստ պահանջվածի, Գնորդը ոչ մի պատասխանատվություն չի կրի հայտի վաղաժամկետ բացման կամ պարունակության փոփոխման համար:

**22. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ**

22.1. Հայտերը պետք է ստացվեն Գնորդի կողմից **ՄՏԱ-ում** նշված հասցեում և ոչ ուշ, քան նշված օրը և ժամին: **ՄՏԱ-ում** նշված լինելու դեպքում հայտատուները հնարավորություն կունենան հայտերը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով: Այն հայտատուները, որոնք հայտերը ներկայացնում են էլեկտրոնային եղանակով, պետք է հետևեն **ՄՏԱ-ում** նշված հայտերի ներկայացման էլեկտրոնային ընթացակարգերին:

22.2. Գնորդը կարող է, իր հայեցողությամբ, երկարաձգել հայտերի ներկայացման վերջնաժամկետը, փոփոխելով Մրցութային փաստաթղթերը՝ համաձայն ՏՄՄ-ի 8-րդ դրույթի, ինչի դեպքում Գնորդի և Հայտատուների բոլոր իրավունքները և պարտավորությունները, որոնք նախկինում պայմանավորված էին վերջնաժամկետով՝ համաձայն դրա ենթակա կլինեն երկարացված/նորացված վերջնաժամկետի:

**23. Ուշացրած**

23.1. Գնորդը չպետք է հաշվի առնի որևէ հայտ, որը ստացվել է

**հայտեր**

հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո (ՏՄՄ 22 դրույթ): Ցանկացած հայտ, որը Գնորդը ստացել է հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, կհայտարարվի ուշացած և մերժված և չբացված վիճակում վերադարձվի Հայտատուին:

**24. Հայտերի հետ վերցնում, փոխարինում և փոփոխում**

24.1. Հայտատուն, Հայտը ներկայացնելուց հետո այն կարող է հետ վերցնել, փոխարինել կամ փոփոխել՝ ուղարկելով լիազորված ներկայացուցչի կողմից ստորագրված գրավոր ծանուցում, ինչպես նաև ներառում է ծանուցման (լիազորագրի) պատճեն՝ համաձայն ՏՄՄ 20.2-րդ դրույթի (բացառությամբ այն դեպքերի, երբ հետ վերցնելու վերաբերյալ ծանուցումները չեն պատճենվում): Հայտի համապատասխան փոփոխումը կամ փոխարինումը պետք է ուղեկցվի համապատասխան գրավոր ծանուցմամբ: Բոլոր ծանուցումները պետք է.

(a) ներկայացված լինեն ՏՄՄ-ի 20 և 21-րդ դրույթների համաձայն (բացի հետ վերցման ծանուցումներից, որոնք չեն պահանջում պատճեններ), բացի այդ համապատասխան ծրարները պետք է համապատասխանաբար նշագրված լինեն <<Հետ վերցնում>>, <<Փոխարինում>> կամ <<Փոփոխում>>, և

(b) գնորդի կողմից ստացվեն մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ համաձայն ՏՄՄ 22 դրույթի:

24.2. Հետ վերցնելու նպատակով պահանջվող հայտերը, համաձայն ՏՄՄ 24.1 ենթադրույթի, պետք է վերադարձվեն Հայտատուներին չբացված վիճակում:

24.3. Հնարավոր չէ հետ վերցնել, փոխարինել կամ փոփոխել որևիցէ հայտ հայտերի ներկայացման վերջնաժամկետի և Հայտատուի կողմից Հայտերի Ներկայացման Ձևում նշված հայտերի ուժի մեջ լինելու ժամանակահատվածի միջև ընկած ժամանակահատվածում կամ դրա երկարաձգված ժամկետի ընթացքում:

**25. Հայտերի բացում**

25.1. Բացառությամբ ՏՄՄ 23 և 24 դրույթի, Գնորդը պետք է հրապարակայնորեն բացի և կարդա (ՏՄՄ 25.3 դրույթ) մինչև վերջնաժամեկտը ստացված բոլոր հայտերը **ՄՏԱ-**

**ում նշված** ամսաթվին, ժամին և վայրում Հայտատուների կողմից նշանակված ներկայացուցիչների և մասնակցության ցանկություն հայտնողների ներկայությամբ: Էլեկտրոնային հայտերի բացման ցանկացած յուրահատուկ ընթացակարգ, եթե էլեկտրոնային հայտեր թույլատրվում են՝ համաձայն ՏՄՄ 22.1 ենթադրույթի, պետք է **նախանշված լինեն ՄՏԱ-ում:**

25.2. Առաջինը, «Հետ վերցնում» նշումով ծրարները պետք է բացվեն և հայտարարվեն, և համապատասխան հայտը չպետք է բացվի, այլ վերադարձվի Հայտատուին: Եթե հետ վերադարձման ծրարը չի պարունակում «լիազորագրի պատճեն», որը հաստատում է Հայտատուի ներկայացուցչի ստորագրելու իրավասությունը, ապա համապատասխան հայտը կբացվի: Հետ վերադարձման հայտը անթույլատրելի է, եթե դրա մասին գրության մեջ չկա լիազորված հարցում հետ վերադարձնելու և դրա հայտարարում հայտի բացման ժամանակ: «Փոխարինում» նշումով ծրարները պետք է բացվեն, հայտարարվեն և փոխարինվեն համապատասխան հայտերի ծրարների հետ, իսկ փոխարինվող հայտը չպետք է բացվի և փակ վիճակում վերադարձվի Հայտատուին: Հայտը չի կարող փոխարինվել, եթե դրա մասին գրության մեջ չկա լիազորված հարցում փոխարինման մասին և դրա հայտարարում հայտի բացման ժամանակ: «Փոփոխում» նշումով ծրարները պետք է բացվեն և հայտարարվեն համապատասխան հայտի հետ: Հայտը չի կարող թարմացվել, եթե դրա մասին գրության մեջ չկա լիազորված հարցում թարմացման մասին և դրա հայտարարում հայտի բացման ժամանակ: Միայն այն հայտերը, որոնք բացվել և հայտարարվել են, կքննարկվեն հետագայում:

25.3. Մնացած բոլոր ծրարները պետք է բացվեն միաժամանակ, կարդալով՝ Հայտի գինը, փոփոխությունները, եթե առկա են, հայտի գինը՝ ներառյալ զեղչերը և այլընտրանքային առաջարկները; անհրաժեշտության դեպքում Հայտի երաշխիքի և Հայտի երաշխիքային հավաստարմագրի առկայությունը; և ցանկացած այլ մանրամասներ, որոնք Գնորդը տեղին

կհամարի: Միայն Հայտի բացման ընթացքում հայտարարված զեղչերը և այլընտրանքային առաջարկները հաշվի կառնվեն գնահատման ընթացքում: Հայտերի բացման ընթացքում, ոչ մի հայտ չի կարող մերժվել, բացառությամբ ուշացած հայտերի՝ համաձայն ՏՄՄ-ի 25.1-րդ ենթադրույթի:

25.4. Գնորդը պետք է կազմի Հայտերի բացման արձանագրություն, որը պետք է ներառի առնվազն՝ Հայտատուի անունը և եթե կա հայտի հետ վերցնելու, փոխարինման կամ փոփոխման մասին գրառումը: Հայտի գինը՝ ամեն լոտի (պայմանագրի) համար առանձին, եթե կիրառելի է՝ ներառելով ցանկացած զեղչ կամ այլընտրանքային առաջարկ, եթե դրանք թույլատրելի են և Հայտի երաշխիքի կամ Հայտի երաշխիքային հայտարարագրի առկայությունը: Ներկա գտնվող Հայտատուների ներկայացուցիչները պետք է ստորագրեն արձանագրությունը: Արձանագրության վրա Հայտատուի ստորագրության բացակայությունը չպետք է անվավեր ճանաչի արձանագրության բովանդակությունը և արդյունքը: Արձանագրության մեկական օրինակ պետք է ուղարկվի բոլոր այն Հայտատուներին:

## Ե. Հայտերի գնահատում և համեմատում

**26. Գաղտնիություն**

26.1 Մինչև Պայմանագրի շնորհումը, հայտերի ուսումնասիրմանը, գնահատմանը, համեմատմանը և հետորակավորմանը վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև պայմանագրի շնորհման վերաբերյալ առաջարկը չպետք է հաղորդվի հայտատուներին կամ որևէ այլ անձանց, որոնք պաշտոնապես կապված չեն տվյալ գործընթացի հետ, համաձայն ՏՄՄ 38 դրույթի:

26.2 Հայտերի ուսումնասիրման, գնահատման, համեմատման և հետորակաորման, ինչպես նաև պայմանագիրը շնորհելու որոշումը ընդունելիս, Գնորդի վրա ազդեցություն գործելու Հայտատուի որևէ փորձ կարող է Հայտի մերժման պատճառ հանդիսանալ:

26.3 Սակայն, չնայաց ՏՄՄ 26.2 դրույթի, հայտը բացելու պահից մինչև Պայամանգրի շնորհումը, եթե Հայտատուն ցանկանում է Գնորդի հետ կապվել մրցույթի հետ

կապված ցանկացած հարցի վերաբերյալ, ապա դա պետք է լինի գրովոր տեսքով:

**27. Հայտերի պարզաբանում**

27.1 Հայտերի ուսումնասիրության, գնահատման, համեմատման և հետորակավորման գործընթացին աջակցելու նպատակով՝ Գնորդը կարող է, իր հայեցողությամբ, ցանկացած Հայտատուից իր Հայտի վերաբերյալ պարզաբանում պահանջել: Հայտատուի կողմից ներկայացված որևէ պարզաբանում, որը չի բավարարում Գնորդի պահանջը, կարող է չընդունվել: Պարզաբանման պահանջը և պատասխանը պետք է լինեն գրավոր: Համաձայն ՏՄՄ 31 դրույթի՝ Հայտի գների կամ բովանդակության ոչ մի փոփոխություն չի կարող պահանջվել, առաջարկվել կամ թույլատրվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտերը գնահատելիս Գնորդը հայտնաբերում է մաթեմատիկական սխալներ:

27.2 Եթե Հայտատուն չի տրամադրում պարզաբանումներ իր հայտի վերաբերյալ մինչ Գնորդի պարզաբանման պահանջում նշված ժամկետը և ամսաթիվը, նրա հայտը կարող է մերժվել:

**28. Շեղումներ, վերապահումներ և բացթողումներ**

28.1 Հայտերի գնահատման ընթացքում կիրառվում են հետևյալ սահմանումները.

(a) Շեղումը Մրցութային փաստաթղթերում նշված պահանջներին հետամուտ չլինելն է,

(b) Վերապահումը սահմանափակող պայմանների սահմանումն է կամ Մրցութային փաստաթղթերում նախանշված պահանջների լիարժեք ընդունումից ձեռնպահ մնալը, և

(c) Բացթողումը Մրցութային փաստաթղթերում պահանջվող տեղեկատվության կամ փաստաթղթավորման ամբողջապես կամ մասնակի չներակայացնելն է:

**29. Հայտերի համապատասխանելիության որոշում**

30.2 Գնորդի կողմից հայտի համապատասխանելիության որոշումը հիմնվում է հայտի բովանդակության վրա՝ ինչպես սահմանված է ՏՄՄ 11-րդ դրույթում:

30.3 Ըստ էության համապատասխան Հայտը այն այտն է, որը համապատասխանում է Մրցութային փաստաթղթերում

ամրագրված պայմաններին, առանց էական շեղումների, վերապահումների կամ բացթողումների: Էական շեղումները, վերապահումները կամ բացթողումներն են.

(a) եթե ընդունվում են,

(i) որոնք էապես ազդում են Պայմանագրով նախատեսված Ապրանքների և հարակից ծառայությունների ծավալի, բովանդակության, որակի և կատարման վրա, կամ

(ii) որոնք էականապես սահմանափակում, չեն համապատասխանում Մրցութային փաստաթղթերին, Պայմանագրով հաստատված Գնորդի իրավունքին կամ Հայտատուի պարտավորություններին, կամ

(b) որոնք ուղղման դեպքում անարդարացի կերպով կազդեն այն հայտատուների մրցութային դիրքի վրա, որոնք ներկայացրել են ըստ էության համապատասխանող հայտեր:

30.4 Գնորդը պետք է ուսումնասիրի հայտի տեխնիկական ասպեկտները՝ համաձայն ՏՄՄ 16 և 17 դրույթների, մասնավորապես հաստատելու, որ Մաս VII-ում (Պահանջների ժամանակացույց) նշված պահանջները բավարարվել են առանց որևէ էական շեղման, վերապահման կամ բացթողման:

30.5 Եթե հայտը ըստ էության չի համապատասխանում Մրցութային փաստաթղթերի պայմաններին, այն պետք է Գնորդի կողմից մերժվի և չի կարող համապատասխանեցվել Հայտատուի կողմից էական շեղումների, վերապահումների կամ բացթողման ուղղումների արդյունքում:

**30. Անհամապատասխանություններ, սխալներ և բացթողումներ**

30.1 Հաշվի առնելով, որ Հայտը ըստ էության համապատասխանում է հիմնական պայմաններին, Գնորդը կարող է անտեսել Հայտում եղած ցանկացած անհամապատասխանություն:

30.2 Եթե Հայտը ըստ էության համապատասխանում է հիմնական պայմաններին, Գնորդը կարող է պահանջել,

որ Հայտատուն ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկատվություն, ողջամիտ ժամանակահատվածում, որպեսզի ուղղի հայտում եղած փաստաթղթային պահանջներին վերաբերող ոչ էական անհամապատասխանությունները կամ բացթողումները: Այդպիսի բացթողումները չպետք է կապված լինեն որևէ կերպով Հայտի գնի հետ: Եթե Հայտատուն չգործի պահանջի համաձայն, այն կարող է մերժման հիմք հանդիսանալ:

30.3 Հաշվի առնելով, որ հայտը հիմնականում համապատասխանում է, Գնորդը պետք է ուղղի քանակապես ոչ էական անհամապատասխանությունները, որոնք առնչվում են Հայտի գնի հետ: Այդ առումով Հայտի գինը ճշտվում է միայն համեմատության նպատակով՝ արտացոլելու բաց թողնված կետի կամ բաղադրիչի գինը:

**31.Մաթեմատիկական սխալների ուղղում**

31.1 Եթե հայտը ըստ էության համապատասխանում է հիմնական պահանջներին, Գնորդը պետք է մաթեմատիկական սխալներն ուղղի հետևյալ հիմունքներով.

(a) եթե նկատվում է անհամապատասխանություն միավորի գնի և ընդհանուրի միջև, որը ստացվում է միավորի գինը բազմապատկած քանակի, միավորի գինը գերակայում է, և ընդհանուրը պետք է ճշտել, բացառությամբ այն դեպքերի, երբ Գնորդի կարծիքով ստորակետը միավոր գնի մեջ սխալ տեղում է դրված, և միավոր գինը կճշտվի, իսկ ընդհանուրը կգերակայի,

(b) եթե առկա է ընդհանուրի սխալ, որը արդյունք է ենթագումարելիների գումարի կամ հանման, ապա գերակայում են ենթագումարելիները, իսկ ընդհանուրի գումարը պետք է համապատասխանաբար ուղղվի, և

(c) եթե առկա է տարբերություն բառերի թվերի միջև, կգերակայի բառերով արտահայտված թիվը, բացառությամբ այն դեպքերի, երբ բառերով արտահատված թիվը վերաբերվում է

մաթեմատիկական սխալի, ինչի դեպքում կգերակայեն թվերով արտահայտված թվերը՝ համաձայն վերոնշյալ (a) և (b) կետերի:

31.2 Հայտատուներից պահանջվում է ընդունել մաթեմատիկական սխալների ուղղումը: Եթե Հայտատուն չընդունի սխալների ուղղումը, համաձայն ՏՄՄ 31.1 դրույթի, Հայտը կմերժվի:

**32. Հայտերի գնահատում**

32.1 Հայտը գնահատելու համար Գնորդը պետք է օգտագործի միայն այն մեթոդոլոգիաները և չափանիշները, որոնք սահմանված են սույն դրույթում: Գնահատման ոչ մի այլ չափանիշ կամ մեթոդաբանություն չպետք է կիրառվի:

32.2 Հայտը գնահատելու համար Գնորդը պետք է հաշվի առնի հետևյալը՝

(ա) գնահատումը կիրականացվի Միավորների կամ Լոտերի (պայմանագրերի) համար՝ համաձայն ՄՏԱ –ի, և Հայտի Գնի, որը նշվել է համաձայն 14-րդ դրույթի,

(բ) թվաբանական սխալների նպատակով գնի կարգավորումը՝ համաձայն ՏՄՄ 31.1 ենթադրույթի,

(գ) զեղչերի հետևանքով վրա կատարված գնային կարգավորումը՝ համաձայն ՏՄՄ 14.3 ենթադրույթի,

(դ) գների ճշգրտում քանակապես արտահայտված ոչ էական անհամապատասխանությունների շնորհիվ՝ համաձայն ՏՄՄ 30.3-ի,

(ե) գնահատման լրացուցիչ գործոնները նշված են Բաժին III-ում, Գնահատման և Որակավորման Չափանիշներ:

32.3 Եթե Մրցութային այս փաստաթղթերը Հայտատուներին հնարավորություն են տալիս տարբեր լոտերի (պայմանագրերի) համար կատարել առանձին գնանշումներ, լոտի (պայմանագրի) միացությունների գնահատատված նվազագույն գինը՝ ներառյալ Հայտադիմումի ձևում առաջարկված որևէ զեղչ որոշելու մեթոդաբանությունը նշվում է Մաս III-ում (Գնահատման և որակավորման չափանիշներ):

32.4 Գնորդը, հայտը գնահատելիս, կարող է հաշվի առնել այլ գործեններ, բացի նշված Հայտի գնի՝ համաձայն ՏՄՄ-ի 14-րդ դրույթի: Այս գործոնները կարող են վերաբերել Ապրանքների և օժանդակ ծառայությունների գնման բնութագրերին, աշխատանքային հատկանիշներին, ինչպես նաև դրանց գնման պայմաններին: Ընտրված գործոնների ազդեցությունը, եթե այպիսիք կան, պետք է արտահայտվեն ֆինանսական պայմաններով, հայտերի համեմատումը հեշտացնելու նպատակով, եթե III Մասում (Գնահատման և Որակավորման Չափանիշներ) այլ կերպ նշված չէ: Օգտագործվելիք գործոնները, մեթոդաբանությունը և չափանիշները պետք է հատկորոշված լինեն ՏՄՄ-ի 32.2-րդ դրույթի (ե) կետով:

**33. Հայտերի համեմատում**

33.1. Գնորդը պետք է համեմատի բոլոր ըստ էության համապատասխանող հայտերի գնահատված գները, որպեսզի որոշի ամենացածր հայտը՝ համաձայն ՏՄՄ 32.2-րդ դրույթի: Ներմուծված ապրանքների, ներառյալ՝ EXW գների, համեմատությունը հիմնվում է <<Առաքում վերջնակետում>> գնի վրա, երկրի ներսում փոխադրումների և ապահովագրության մինչև նշանակման վայր և վաճառք, ԱԱՀ-ի և որևէ այլ հարկերի հետ պահանջված տեղադրումների, վերջնակետում բեռնաթափման, ուսուցման կոմիսիոն և այլ ծառայությունների գների հետ միասին:

**34. Հայտատուի որակավորում**

34.1 Գնորդը պետք է որոշի նվազագույն գնահատված և էականորեն պահանջներին համապատասխանող հայտ ներկայացրած Հայտատուի անհրաժեշտ որակավորումը՝ բավարար ձևով Պայմանագիրը կատարելու համար, ինչպես նշված է Մաս III-ում (Գնահատման և որակավորման չափանիշներ):

34.2 Որոշումը պետք է հիմնված լինի Հայտատուի կողմից ներկայացված Հայտատուի որակավորումների փաստաթղթային վկայության վրա՝ համաձայն ՏՄՄ-ի 17-րդ դրույթի:

34.3 Դրական որոշումը նախապայման կհանդիսանա Հայտատուին Պայմանգիրը շնորհելու համար: Բացասական որոշումը կհանգեցնի հայտի մերժմանը, և այդ դեպքում Գնորդը կուսումնասիրի հաջորդ

նվազագույն գնահատված հայտը, Հայտատուի՝ պայմանագիրը բավարար կերպով կատարելու ունակությունները գնահատելու նպատակով:

**35. Ցանկացած հայտ ընդունելու և ցանկացած կամ բոլոր հայտերը մերժելու Գնորդի իրավունք**

35.1 Մինչև պայմանագրի շնորհումը Գնորդը իրավունք ունի ընդունել կամ մերժել ցանկացած հայտ, ինչպես նաև չեղյալ համարել մրցութային գործընթացը և մերժել բոլոր հայտերը՝ առանց Հայտատուների հանդեպ որևէ պարտավորություն կրելու և իր կողմից ընդունված որոշումների համար հիմքերի մասին տեղեկացնելու պարտադրվածության: Չեղյալ համարելու դեպքում, ներկայացված բոլոր հայտերը և մասնավորապես հայտի երաշխիքները պետք է արագ վերադարձնել Հայտատուներին:

## Զ. Պայմանագրի շնորհում

**36. Պայմանագրի շնորհման չափանիշներ**

36.1 Համաձայն ՏՄՄ 37.1 դրույթի, Գնորդը պետք է Պայմանագիրը շնորհի այն Հայտատուին, ում առաջարկը ճանաչվել է որպես նվազագույն գնահատված հայտ և էականորեն համապատասխանում է Մրցութային փաստաթղթերում սահմանված պահանջներին, հետագա պայմանով, որ Հայտատուն գնահատվում է որակավորված՝ Պայմանագիրը բավարար կերպով կատարելու համար:

**37. Պայմանագրի շնորհման ժամանակ քանակների փոփոխման գնորդի իրավունք**

37.1 Պայմանագրի շնորհման ժամանակ Գնորդին իրավունք է վերապահվում ավելացնել կամ պակասեցնել նախապես նշված ապրանքների և ծառայությունների քանակը (Բաժին VI, Պահանջվող ապրանքների ցանկ)՝ **ՄՏԱ-ում նշված** տոկոսի չափով՝ առանց գնի, հայտի կամ Մրցութային փաստաթղթերի պայմանների փոփոխման:

**38. Պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցում**

38.1 Մինչև հայտի վավերականության ժամկետի ավարտը, Գնորդը պետք է գրավոր կերպով ծանուցի հաղթող ճանաչված Հայտատուին՝ Հայտի ընդունման վերաբերյալ: Ծանուցման վերաբերյալ նամակը (այսուհետ՝ Պայմանագրի պայմաններում և Պայմանագրային ձևերում՝ <<Ընդունման նամակ>>) պետք է նշի այն գումարը, որը Գնորդը վճարելու է Մատակարարին՝ Ապրանքների մատակարարման հետ կապված (այսուհետ՝ Պայմանագրի

պայմաններում և Պայմանագրային ձևերում՝ <<Պայմանագրային գին>>): Միաժամանակ Գնորդը պետք է տեղեկացնի նաև մյուս բոլոր Հայտատուներին մրցույթի արդյունքների մասին և դրանք հրապարակի Պետական գնումների կայքում, եթե առկա է, և (կամ) Ծրագրի ինտերնետային կայքում.

(i) հայտ ներկայացրած յուրաքանչյուր Հայտատուի անունը,

(ii) հայտի այն գները, որոնք ընթերցվել են Հայտերի բացման ժամանակ,

(iii) յուրաքանչյուր գնահատված Հայտի անվանումը և գնահատված գները,

(iv) մերժված հայտատուների անունները և մերժման պատճառներրը, և

(v) Հաղթող ճանաչված Հայտատուի անունը և իր ներկայացրած գինը, ինչպես նաև շնորհված պայմանագրի տևողություն և ամփոփ բովանդակությունը և ծավալը:

38.2 Մինչև պաշտոնական Պայմանագրի պատրաստվելը և ուժի մեջ մտնելը, պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցումը պետք է լինի պարտավորեցնող Պայմանագիր:

38.3 Գնորդը պետք է անմիջապես գրավոր կերպով պատասխանի յուրաքանչյուր պարտված Հայտատուի, որը պայմանագրի շնորհման մասին Հրապարակումից հետո, համաձայն ՏԱՄ 38.1 դրույթի, կպահանջի իր Հայտի մերժման հիմքերի գրավոր պարզաբանում:

**39. Պայմանագրի ստորագրում**

39.1 Անմիջապես ծանուցումից հետո Գնորդը պետք է հաղթող ճանաչված Հայտատուին ուղարկի Համաձայնագիրը:

39.2 Համաձայնագիրը ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում, հաղթող ճանաչված Հայտատուն պետք է ստորագրի, թվագրի և այն վերադարձնի Գնորդին:

39.3 Առկա չէ:

**40. Պայմանագրի կատարման երաշխիք**

40.1 Գնորդից Պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում, հաղթող ճանաչված Հայտատուն, ըստ պահանջի, պետք է ներկայացնի Պայմանագրի կատարման երաշխիք, համաձայն ՊԸՊ-ների՝ օգտագործելով Պայմանագրի կատարման երաշխիքի ձևը (Բաժին X, Պայմանագրի ձևեր), կամ Գնորդի համար ընդունելի այլ Ձևը:

40.2 Հաղթող ճանաչված Հայտատուի կողմից վերոնշյալ Պայմանագրի կատարման երաշխիքը չներկայացնելը կամ Պայմանագիրը չստորագրելը կարող է բավարար հիմք հանդիսանալ պայմանագրի շնորհումը չեղյալ համարելու և Հայտի երաշխիքը գանձելու համար: Այդ դեպքում, Գնորդը կարող է Պայմանագիրը շնորհել հաջորդ նվազագույն գնահատված Հայտը ներկայացնող Հայտատուին, ում առաջարկը, Գնորդի որոշմամբ, ըստ էության համապատասխանում է մրցույթի հիմնական պահանջներին և, որ Հայտատուն ունի անհրաժեշտ որակավորում, որպեսզի բավարար ձևով կատարի Պայմանագիրը:

# Բաժին IV. Հայտի ձևեր

## Ձևերի ցանկ

Հայտադիմումի ձև ........................................................................................................
Հայտատուի տվյալների ձև ...............................................................................................
ՀՁ գործընկերոջ տվյալների ձև.........................................................................................
Գնացուցակ ....................................................................................................................
Գնացուցակ և կատարման ժամանակացույց՝ Հարակից ծառայություններ ..... **Error! Bookmark not defined.**
Հայտի երաշխիքի ձև (Բանկային երաշխիք) .........................................................................
Հայտի երաշխիքի ձև ......................................................................................................
Հայտի երաշխիքային հայտարարագրի ձև............................................................................
Արտադրողի լիազորագիր ...............................................................................................

# Հայտադիմումի ձև

*Հայտատուն պետք է լրացնի այս Ձևը իր ձևաթղթի վրա՝ հստակ նշելով Հայտատուի լրիվ անունը և հասցեն:*

***Ծանոթություն՝ Այս ձևերի կազմման համար կիրառելի է շեղագիր տեքստը և ջնջվելու է վերջնական արդյունքներից:***

Ամսաթիվ. ***[Հայտի ներկայացման ժամանակը (օր, ամիս, տարի*]**
ԱՄՄ No.: ***[մրցութային գործընթացի համար]***
Մրցութային հրավեր No.: ***[նշեք մրցութային հրավերի համարը]***

Ում. ***[Գնորդի լրիվ անունը]***

(ա) Մենք ուսումնասիրել ենք Մրցութային Փաստաթղթերը և չունենք որևէ վերապահում դրանց վերաբերյալ, ներառյալ՝ Հավելվածը, որը հրապարակված է համաձայն Տվյալներ մրցույթի մասնակիցներին (ՏՄՄ 8),

(բ) Մենք բավարարում ենք ընտրության պահանջներին և չունենք շահերի բախում՝ համաձայն ՏՄՄ 4 դրույթի,

(գ) Մենք չենք կասեցվել կամ անընդունելի չենք հայտարարվել Գնորդի կողմից նրա երկրում Հայտի երաշխիքայի հայտարարագրի կատարման հիման վրա, համաձայն ՏՄՄ 4.6 ենթադրույթի,

(դ) Մրցութային Փաստաթղթերին համապատասխան և Ապրանքների Ցանկի և Մատակարարման Ժամանակացույցի համաձայն՝ առաջարկում ենք մատակարարել հետևյալ Ապրանքները և Հարակից Ծառայությունները [***Ապրանքների և Հարակից Ծառայությունների համառոտ նկարագրությունը***],

(ե) Հայտի ընդհանուր գինը, առանց (գ) կետում ստորև առաջակվող զեղչերի, հետևյալն է՝

Միայն մեկ լոտի դեպքում՝ Հայտի ընդհանուր գինը **[գրել հայտի ընդհանուր արժեքը բառերով և թվերով՝ նշելով գումարը և արժույթը]**,

Բազմակի լոտի դեպքում` յուրաքանչյուր լոտի ընդհանուր գինը **[գրել յուրաքանչյուր լոտի ընդհանուր գինը բառերով և թվերով` նշելով գումարները և արժույթը],**

Բազմակի լոտերի դեպքում` բոլոր լոտերի ընդհանուր գինը (բոլոր լոտերի ընդհանուր գումարը) **[գրել բոլոր լոտերի ընդհանուր գումարը բառերով և թվերով` նշելով գումարը և արժույթը],**

(զ) Առաջարկվող զեղչերը և դրանց կիրառման մեթոդաբանությունը`

(i) Առաջարկվում են հետևյալ զեղչերը.[***Մանրամասն հատկորոշել յուրաքանչյուր առաջարկվող զեղչը***].

(ii) Զեղչերի կիրառությունից հետ զուտ գինը որոշելու համար հաշվարկների ճշգրիտ մեթոդը տրված է ստորև. [***Մանրամասն հատկորոշել զեղչերը կիրառելու մեթոդը***]

(է) Մեր հայտը վավեր կլինի [***նշել օրացույցային օրերի քանակը***] սկսած հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրվանից` համաձայն Մրցութային փաստաթղթերի, և այն մեզ համար կլինի պարտադիր կլինի և կարող է հաղթող ճանաչվել ցանկացած ժամանակ մինչ այդ ժամկետի սպառվելը,

(ը)Եթե մեր հայտը ճանաչվի հաղթող, մենք պարտավորվում ենք ձեռք բերել Պայմանագրի Կատարման Երաշխիք` համաձայն Մրցութային փաստաթղթերի,

(թ) Մրցութային գործընթացում մենք չենք մասնակցում որպես Հայտատու կամ ենթակապալառու մեկից ավելի հայտում, համաձայն ՏՄՄ 4.2 (ե),

(ժ) Մեր ընկերությունը, դրա մասնաճյուղերը և դուստր ընկերությունները, ներառյալ Պայմանագրի որևէ մասով ենթակապալառուները կամ մատակարարները, Բանկի կողմից անընդունելի չեն հայտարարվել` համաձայն Գնորդի երկրի օրենքների կամ պաշտոնական կանոնակարգերի, ինչպես հատկորոշված է Միացյալ Ազգերի Անվտանգության Խորհրդի որոշման մեջ,

(ի) Մենք պետական հիմնարկություն չենք / Մենք պետքկան հիմնարկություն ենք, սակայն բավարարում ենք ՏՄՄ 4.5 –ի պահանջներին[1]:

[1] *Հայտատուի կողմից կիրառվում է ըստ անհրաժեշտության*[2] Այս համատեքստում ցանկացած գործողություն, որն անպատեհ ազդում է գնումների գործընթացի կամ պայմանագրի կատարման վրա, որպես առավելություն, համարվում է անտեղին:

(լ) Վճարվել են կամ ենթական են վճարման պայմանագրի կատարմանը կամ մրցութային գործընթացին վերաբերող հետևյալ միջնորդավճարները, պարգևավճարները կամ տուրքերը. [**գրել՝ յուրաքանչյուր Ստացողի/Հասցեատիրոջ ամբողջական անունը, հասցեն, յուրաքանչյուր միջնորդավճարի կամ պազևավճարի վճարման հիմքերը և յուրաքանչյուր այդպիսի միջնորդավճարի կամ պազևավճարի չափը և արժույթը**]

| Ստացողի անունը | Հասցեն | Վճարման հիմքը | Գումարի չափը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

(Եթե ոչինչ չի վճարվել կամ չի վճարվելու, նշել <<ոչինչ>>:)

(խ) Մենք հասկանում ենք, որ մինչև պայմանագրի պատրաստումը և ձևակերպումը, այս հայտը՝ Ձեր գրավոր համաձայնության և մրցույթի շնորհման ծանուցման հետ միասին կհանդիսանան մեր միջև որպես փոխհարաբերություններ կարգավորող պայմանագիր, և

(ծ) Մենք հասկանում ենք, որ դուք պարտավոր չեք ընդունել նվազագույն գնահատված հայտը կամ ցանկացած այլ հայտ:

(կ) Սույնով մենք հաստատում ենք, որ քայլեր ենք ձեռնարկել հավաստիանալու, որ ոչ մի անձ, որը հանդես է գալիս մեր կողմից կամ մեզ համար, չի ներառվի որևէ տեսակի խարդախության և կոռուպցիայի մեջ:

Հայտատուի անունը* **[գրել Հայտատուի լրիվ անունը]**

Անձի անունը, որը պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու սույն հայտը

Հայտատուի անունից ** [***գրել այն անձի անունը, որը պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու Հայտը***]

Հայտը ստորագրող անձի պաշտոնը [**Հայտը ստորագրող անձի լրիվ պաշտոնը**]

Վերոնշյալ անձի ստորագրությունը [**այն անձի ստորագրությունը, որի անունը և պաշտոնը նշված է վերը**/

Ստորագրման ամսաթիվը [**գրել ստորագրման օրը**], [**ամիսը**], [**տարին**]

***** *Եթե Հայտը ներկայացվում  է Համատեղ Ձեռնարկության կողմից, ապա Հայտադիմունի ձևը պետք է ներկայացվի Համատեղ Ձեռնարկության Հայտատուի անունը:

** Հայտը ստորագրող անձը պետք է ունենա Հայտատուի կողմից տրված լիազորագիր, որը կցվում է Հայտացուցակներին:

# Հայտատուի տվյալների ձև

*[Հայտատուն պետք է լրացնի այս Ձևը՝ համաձայն ստորև բերված ցուցումների: Որևէ փոփոխություն թույլատրելի չէ, իսկ փոխարինումները ընդունելի չեն:]*

Ամսաթիվ. *[Հայտի ներկայացման ժամկետ (օր, ամիս, տարի]*
ԱՄՄ No.: *[մրցութային գործընթացի համար]*

_______ րդ էջ_ ______ էջից

| |
|---|
| 1. Հայտատուի իրավաբանական անուն. *[Հայտատուի իրավաբանական անունը]* |
| 2. Համատեղ ձեռնարկության դեպքում, յուրաքանչյուր կողմի իրավաբանական անունը. *[ՀՁ-ի յուրաքանչյուր կողմի անունը]* |
| 3. Հայտատուի ընթացիկ/առկա կամ ենթադրվող գրանցման երկիր. *[Ընթացիկ կամ ենթադրվող Գրանցման Երկիր]* |
| 4. Հայտատուի գրանցման տարի. *[Հայտատուի գրանցման տարի]* |
| 5. Հայտատուի իրավաբանական հասցե՝ գրանցված երկրում. *[Հայտատուի իրավաբանական հասցեն գրանցման երկրում]* |
| 6. Տեղեկություններ Հայտատուի լիազորված ներկայացուցչի վերաբերյալ<br>Անուն. *[Լիազորված Ներկայացուցչի անունը]*<br>Հասցե. *[Լիազորված Ներկայացուցչի հասցեն]*<br>Հեռախոսի/Ֆաքսի համարներ. *[Լիազորված Ներկայացուցչի հեռախոսի/ֆաքսի համարները]*<br>Էլ. փոստի հասցե. *[Լիազորված Ներկայացուցչի էլ. հասցեն]* |

7. Կից` ստորև նշված փաստաթղթերի բնօրինակների պատճենները. *[նշեք կցված փաստաթղթերը]*

- ☐ Միավորման մասին հոդվածներ (կամ ասոցացման համարժեք փաստաթղթեր և (կամ) վերոնշյալ իրավաբանական անձի գրանցման փաստաթղթերը` համաձայն ՏՄՄ-ի 4.3 ենթադրույթի)

- ☐ ՀՁ-ի առկայության դեպքում, ՀՁ-ի ստեղծման կամ ՀՁ համաձայնագրի ստեղծման մտադրության մասին նամակ` համաձայն ՏՄՄ-ի 4.1 ենթադրույթի

- ☐ Պետական հիմնարկ-ձեռնարկության դեպքում, համաձայն ՏՄՄ-ի 4.5 ենթադրույթի, փաստաթղթեր, որոնք հաստատում են
    - իրավաբանորեն և ֆինանսապես անկախությունը
    - առևտրային օրենքով գործունեությունը
    - այն, որ Հայտատուն Գնորդից կախում չունեցող գործակալություն է

2. Ներառված են կազմակերպաիրավական կառուցվածքը, Տնօրենների խորհրդի ցուցակը և շահառու սեփականությունը:

# Համատեղ ձեռնարկության գործընկերոջ տվյալների ձև

*[Հայտատուն պետք է լրացնի այս Ձևը՝ համաձայն ստորև բերված ցուցումների]*

Ամսաթիվ. *[Հայտի ներկայացման ժամկետ (օր, ամիս, տարի*]
ԱՍՍ No.: *[մրցութային գործընթացի համար]*

________ րդ էջ_ ______ էջից

| |
|---|
| 1. Հայտատուի իրավաբանական անուն. *[Հայտատուի իրավաբանական անունը]* |
| 2. Համատեղ ձեռնարկության կողմի իրավաբանական անունը. *[ՀՁ-ի կողմի անունը]* |
| 3. ՀՁ-ի կողմի գրանցման երկիր. *[Գրանցման Երկիր]* |
| 4. ՀՁ-ի կողմի գրանցման տարի. *[ՀՁ-ի կողմի գրանցման տարի]* |
| 5. ՀՁ-ի կողմի իրավաբանական հասցե՝ գրանցված երկրում. *[ՀՁ-ի իրավաբանական հասցեն գրանցման երկրում]* |
| 6. ՀՁ-ի կողմի լիազորված ներկայացուցչի մասին տեղեկատվություն<br>Անուն. *[ՀՁ-ի կողմի լիազորված ներկայացուցչի անուն]*<br>Հասցե. *[ՀՁ-ի կողմի լիազորված ներկայացուցչի հասցե]*<br>Հեռախոսի/Ֆաքսի համարներ. *[ՀՁ-ի կողմի լիազորված ներկայացուցչի հեռախոսի/ֆաքսի համարներ]*<br>Էլ. փոստի հասցե. *[ՀՁ-ի կողմի լիազորված ներկայացուցչի էլ փոստի հասցե]* |
| 7. Կից՝ ստորև նշված փաստաթղթերի բնօրինակների պատճենները. *[նշեք կցված փաստաթղթերը]*<br>☐ Միավորման մասին հոդվածներ (կամ ասոցացման համարժեք փաստաթղթեր և (կամ) վերոնշյալ իրավաբանական անձի գրանցման փաստաթղթերը՝ համաձայն ՏՄՄ-ի 4.3 ենթադրույթի)<br>☐ Գնորդի երկրում պետությանը պատկանող հաստատության դեպքում, փաստաթղթային հիմնավորում առ այն, որ հաստատությունը իրավաբանորեն և ֆինանսապես անկախ է, և գործում է առևտրային օրենքի |

| |
|---|
| համապատասխան՝ համաձայն ՏՄՄ-ի 4.5 ենթադրույթի:<br>2. Ներառված են կազմակերպաիրավական կառուցվածքը, Տնօրենների խորհրդի ցուցակը և շահառու սեփականությունը: |

# Գնացուցակի ձևեր

*[Հայտատուն պետք է լրացնի այս Գնացուցակի ձևերը՝ համաձայն նշված ցուցումների: 1-ին սյունակում տրված* ***Ապրանքների գնացուցակը*** *պետք է համընկնի Պահանջների ցանկում Գնորդի կողմից ամրագրված Ապրանքների և օժանդակ ծառայությունների ցուցակի հետ:]*

# Գնացուցակ

| Գնորդի երկիր<br>_______________________ | Արժույթը՝ համաձայն ՏՄՄ 15 դրույթի | Ամսաթիվ՝ ______________________ ____<br>NCB No: ______________________<br>Էջ N° ______ ______էջից |
|---|---|---|

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի համար N° | Ապրանքների նկարագրություն | Քանակ | Միավոր | Միավորի գին <<Մատակարարված վերջնական նշանակման վայրում>> | Միավորի գինը EXW գին | Գինը յուրաքանչյուր տողի ապրանքի համար վերջնական նշանակման վայր Ապրանքների առաքման համար Գնորդի երկրում պահանջվող փոխադրումների և այլ ծառայությունների համար | Վաճառքից ստացված և այլ հարկատեսակներ, որոնք վճարվում են տողի ապրանքի համար, եթե Պայմանագիր է շնորհվում (համաձայն ՏՄՄ 14.8 (a)(ii) | Յուրաքանչյուր ապրանքի ընդհանուր գինը (Col. 3X5) |
| *[գրել տողի համարը]* | *[գրել Ապրանքի անվանումը]* | *[գրել մատակարարվող միավորների քանակը և միավորի անվանումը]* | | *[գրել EXW միավորի գինը]* | *[գրել ընդհանուր EXW գինը ըստ տողերի ապրանքների]* | *[գրել համապատասխան գինը յուրաքանչյուր տողի համար]* | *[Գրել վաճառքից ստացված և այլ հարկատեսակները, որոնք վճարվում են տողի ապրանքի համար, եթե Պայմանագիր է շնորհվում]* | *[գրել յուրաքանչյուր ապրանքի ընդհանուր գինը]* |
| | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | Ընդհանուր գինը | |

Հայտատուի անունը *[գրել Հայտատուի լրիվ անունը] Հայտատուի ստորագրությունը [Հայտը ստորագրող անձի ստորագրությունը] Ամսաթիվը [գրել ամսաթիվը]*

# Գնացուցակ և Կատարման ժամանակացույց՝ Հարակից ծառայություններ

| Արժույթը՝ համաձայն ՏՄՄ 15 դրույթի | | | | | Ամսաթիվ___________________<br>NCB No. ______________________<br><br>Էջ N° ______ ______էջից | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Ծառայության No. | Ծառայությունների նկարագիր (բացառում է վերջնական նշանակման վայր Ապրանքների առաքման համար Գնորդի երկրում պահանջվող փոխադրումները և այլ ծառայությունները) | Ծագման երկիր | Քանակ | Միավոր | Միավորի գին | Յուրաքանչյուր ծառայության ընդհանուր գին (Աղյուս. 4*6 ) |
| *[գրել Ծառայության համարը ]* | *[ գրել Ծառայությունների նկարագիրը]* | *[գրել Ծառայությունների ծագման երկիրը]* | *[գրել մատակարարվող ապրանքների քանակը]* | *[ միավորի անվանումը]* | *[գրել յուրաքանչյուր ապրանքի միավոր գինը]* | *[գրել յուրաքանչյուր ապրանքի ընդհանուր գինը]* |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | Հայտի ընդհանուր գինը | | |

Հայտատուի անունը *[գրել Հայտատուի լրիվ անունը]* Հայտատուի *ստորագրությունը [Հայտը ստորագրող անձի ստորագրությունը]* Ամսաթիվը *[գրել ամսաթիվը]*

# Հայտի երաշխիքի ձև

## (Բանկային երաշխիք)

*[Բանկը պետք է լրացնի այս Բանկային երաշխիքի ձևը՝ ստորև նշված ցուցումների համաձայն]*

*[Երաշխավորողի ձևաթղթով նամակ կամ SWIFT կոդը]*

**Շահառու՝** *[Գնորդի անուն և հասցե]*

**IFB No.** *[Գնորդի՝ Հայտի հրավերի համարը]*

**Ամսաթիվ՝** *[տրամադրման ամսաթիվը]*

**ՀԱՅՏԻ ԵՐԱՇԽԻՔ No.** *[Երաշխավորողի համարը]*

**Երաշխավորող:** *[Հարցի անվանումը և հասցեն, եթե նշված չէ ձևաթղթում]*

Մենք տեղեկացվել ենք, որ [Հայտատուի լրիվ անունը, համատեղ ձեռնարկության դեպքում, Հայտի Երաշխիքը պետք է լինի հայտը ներկայացնող համատեղ ձեռնարկության բոլոր գործընկերների անունով] (այսուհետ՝ «Դիմող») Ձեզ Հայտ է ներկայացրել՝ թվագրված *[ամսաթիվը]* (այսուհետ՝ «Հայտ»)՝ Մրցութային Հրավեր No. *[ՄՀ համարը]* *[ՄՀ]* –ի շրջանակում *[Պայմանագրի անունը]*-ի կատարման նպատակով:

Բացի այդ, մենք հասկանում ենք, որ, համաձայն Ձեր պայմանների, հայտերը պետք է հիմնավորել հայտի երաշխիքով:

Հայտատուի պահանջով՝ մենք՝ *[Բանկի անվանումը], սույնով պարտավորվում ենք անվերապահորեն Ձեզ վճարել ցանկացած գումար կամ գումարներ, որոնք ընդհանուր առմամբ չեն գերազանցի [գումարը թվերով]* (*[գումարը բառերով]*)՝ Ձեր գրավոր պահանջը ստանալուն պես առ այն, որ Հայտատուն խախտել է հայտի պայմանների համաձայն ստանձնած իր պարտավորությունները, քանի որ Դիմողը՝

(a) հետ է կանչել իր Հայտը՝ Հայտադիմումում Հայտատուի կողմից նշված հայտի վավերականության ժամկետի ընթացքում; կամ

(b) հայտի վավերականության ժամկետի ընթացքում տեղեկացվել է Գնորդի կողմից իր Հայտը հաղթող ճանաչելու մասին և (i) չի կարող կամ հրաժարվում է ստորագրել Պայմանագրի Ձևը; կամ (ii) չի կարող կամ հրաժարվում է անհրաժեշտության դեպքում ներկայացնել Պայմանագրի կատարման երաշխիքը՝ համաձայն «Տվյալներ Մրցույթի Մասնակիցներին» բաժնի:

Այս Երաշխավորագիրն կհամարվի ուժը կորցրած, եթե՝ (ա) Հայտատատուի հաղթող ճանաչվելուն պես մենք ստանանք Հայտատուի կողմից ստորագրված Պայմանագրի պատճենը և Պայմանագրի կատարման երաշխիքը, որը Ձեզ է տրամադրվել Հայտատուի պահանջով; կամ (բ) Հայտատուի հաղթող չճանաչվելուն պես (i) մենք ստանանք Ձեր կողմից Հայտատուին ուղարկված ծանուցման պատճենը, որը կպարունակի հաղթող ճանաչված Հայտատուի անունը; կամ (ii) Հայտատուի Հայտի վավերականության վերջնաժամկետին հաջորդող քսանութ օրվա ավարտից հետո:
Հետևաբար, սույն երաշխիքի համաձայն վճարումների վերաբերյալ ցանկացած պահանջ պետք է մեր կողմից ստացվի նույն օրը կամ մինչ այդ օրը:

Սույն երաշխիքը ենթակա է Միջազգային Առևտրային Պալատի No. 758 հրապարակման՝ «Առաջին իսկ Պահանջով Երաշխիքի տրամադրման Միասնական Կանոններին»:

_____________________________
*[ստորագրություն (-ներ)]*

***Ծանոթություն. շեղագիր ամբողջ տեքստը նախատեսված է սույն ձևը լրացնելու համար է և պետք է ջնջել վերջնական փաստաթղթից:***

# Ապահովագրական ընկերության երաշխիք

[ԱպահովագրականընկերությունըպետքէլրացնիհետևյալԵրաշխիքիձևը՝համաձայնս ահմանվածցուցումների]

ԵՐԱՇԽԻՔ NO. ______________________

ՍույնԵրաշխիքով [Հայտատուիանունը] որպեսՊրինցիպալ (այսուհետ՝”Պրինցիպալ”) և [Ապահովագրականընկերությանանվանումընհաւցեն], որնիրավասուէգործունեությունծավալել [Գնորդիերկրիանունը] որպեսԱպահովագրականընկերությունն իրավունքունիտրամադրելԵրաշխիքներ (այսուհետ՝”Երաշխավոր”) անվերապահորենպարտավորությունենկրումորպեսՊարտատեր [Գնորդիանունը] (այսուհետ՝”Գնորդ”) [Գումարըբառերով] գումարիչափով [Երաշխիքիգումար] : Գումարիճշգրիտևպատշաճվճարմանհամարպատասխանատուենքինչպեսմենք՝ ՊրինցիպալըևԵրաշխավորըմիասինևյուրաքանչյուրսիրիհերթին, այնպեսէլմերիրավահաջորդնուհնարավորներկայացուցիչը:

Որտեղ, Պրինցիպալը գրավոր Հայտ է ներկայացրել Գնորդին թվագրված ____ օրը, 20___թ.՝ [Պայմանագրի անունը] իրականացնելու նպատակով (այսուհետ՝”Հայտ”), Սույն Երաշխիքը գործում է այն դեպքում, երբ Պրինցիպալը.

ա) Ետ է վերցրել իր Հայտը Հայտի ձևում նշված Հայտի վավերականության ժամկետի ընթացքում, կամ
բ/ Հայտը վավեր լինելու ժամանակահատվածում Գնորդի կողմից ծանուցված լինելով Հայտի ընդունման մասին, (i) ձախողում կամ մերժում է ստորագրել Պայմանագիրը, , կամ (ii) ձախողում, կամ մերժում է Կատարման երաշխիք տրամադրել, եթե պահանջվում է համաձայն”Ցուցումներ Հայտատուներին”բաժնի պայմանների:

Վերը նշված պայմաններից որևէ մեկի վրա հասնելուն պես Երաշխավորը պարտավորվում է անմիջապես վճարել Գնորդին վերոնշյալ գումարը նրա առաջին իսկ գրավոր պահանջի դեպքում, առանց Գնորդի կողմից ապացույցներ և հիմնավորումներ պահանջելու՝ հստակ նշելով, թե վերևում թվարկված դեպքերից որ մեկն է հանդիսացել պահանջի պատճառ:
Երաշխավորը այսուհետ համաձայնվում է, որ իր պարտավորությունը ուժի մեջ է մինչև”Հայտերի ներկայացման հրավերք”բաժնում նշված հայտի վավերականության ժամկետը լրանալուց հետո 28 օրվա ընթացքում, կամ նախորոք Գնորդի կողմից Երաշխիքի վավերականության երկարաձգված ժամկետը լրանալուց հետո, ներառյալ վերջին օրը: Երկարաձգման վերաբերյալ Երաշխավորին տրված ծանուցումը այստեղ չի դիտարկվում:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈՀԻՇՅԱԼԻ, Պրինցիպալի և Երաշխավորի լիազորված անձիք հաստատում են սույն փաստաթուղթը ____օրը _____, 20___ թ.:

Պրինցիպալ ________________________ Երաշխավոր

___________________________

Կազմակերպությանկնիք

__________________________________

_______________________________________

Ստորագրություն Ստորագրություն
(Տպված Անուն, ազգանուն և պաշտոն) (Տպված Անուն, ազգանուն և պաշտոն)

# *Հայտի ապահովման հայտարարագիր*

Ամսաթիվ. *[]*
Հայտի համար.

Ում. *[Գնորդի անուն և հասցե]*

Մենք, ներքոստորագրյալներս հայտնում ենք, որ.

Մենք հասկանում ենքոր, ըստմեր պայմանների, հայտերը պետք է կցված լինեն Հայտի ապահովման հայտարարագրով:

Մենք ընդունում ենք, որ մենք ավտոմատ կերպով **3 (երեք) տարով** կզրկվենք Պատվիրատուի կողմից հայտարարված որևէ մրցույթին մասնակցելու իրավունքից սկսված *[25.12.2015թ.)]*, եթե մենք չկատարենք հայտի պայմաններով սահմանված մեր պարտականությունները, եթե.

(ա) Հայտի տվյալներում նշված՝ հայտի վավերական ժամկետի ընթացքում մենք հրաժարվում ենք մեր Հայտից, կամ

(բ) Հայտի վավերական ժամկետի ընթացքում Պատվիրատուի կողմից Հայտի ընդունման ծանուցում ստանալուց հետո (i) ձախողում կամ հրաժարվում ենք պայմանագրի կատարումից, եթե պահանջվում է, կամ (ii) ձախողում կամ հրաժարվում ենք ներկայացնել Աշխատանքների Կատարման Երաշխիքը համաձայն Ցուցումներ Հայտատուներին:

Մենք գիտակցում են, որ այս Հայտի ապահովման հայտարարագիրը կկորցնի իր ուժը եթե մենք չճանաչվենք հաղթող երբ. (i) մենք ստանանք գրավոր ծանուցում հաղթող հայտատուի անունով; կամ (ii) մեր հայտի վավերացման ժամկետից 28 օր հետո:

Հայտատուի անունը*___________________________________________________________

Հայտատուի կողմից լիզորված անձի Անուն, Ազգանունը՝ ___________________________

Պաշտոնը՝______________________________________________________________________

Հայտատուի կողմից լիզորված անձի ստորագրությունը**_________________________

Ստորագրվել է՝ ---------------------------------------------------------------------------

Պաշտոնը՝-------------------------------------------------------------------

Անուն, Ազգանունը՝ ----------------------------------------------------------------

Ամսաթիվ _____________ ամիս , _______

Կազմակերպության կնիքը

*Համատեղ ձեռնարկության դեպքում որպես Հայտատու նշվում է Համատեղ ձեռնարկության անունը:*

***Հայտը պետք է ստորագրված լինի ստորագրելու իրավասություն ունեցող անձի կողմից: Հայտատուն պետք է ներառի իրավասության մասին փաստաթուղթն իր Հայտում:*

# Արտադրողի լիազորագիր

*[Հայտատուն պետք է Մատակարարից պահանջի լրացնել այս ձևը՝ համաձայն տորև բերված ցուցումների: Սույն նամակ-լիազորագիրը պետք է լինի Մատակարարի ձևաթղթի վրա և պետք է ստորագրված լինի ստորագրելու իրավասություն ունեցող անձի կողմից: Հայտատուն պետք է ներառի այն իր Հայտում, եթե այդպես նշված է ՄՏՆ-ում:]*

Ամսաթիվ. *[Հայտի ներկայացման ամսաթիվը (օր, ամիս, տարի*]
NCB No.: *[մրցութային գործընթացի համար]*

Գնորդին՝ *[Գնորդի լրիվ անունը]*

Հաշվի առնելով, որ

մենք՝ *[Արտադրողի լրիվ անվանումը], հանդիսանալով [արտադրվող ապրանքների տեսակը]-ի* պաշտոնական արտադրող, որը ունի գործարաններ [Արտադրողի գործարանների լրիվ հասցեն] հասցեով, սույնով լիազորում ենք *[Հայտատուի լրիվ անունը,]* ներկայացնելու հայտ, որի նպատակն է տրամադրել մեր կողմից արտադրված հետևյալ Ապրանքները *[Ապրանքների անվանումները և/կամ համառոտ նկարագիրը],* և հետագայում բանակցելու և կնքելու Պայմանագիրը:

Սույնով մենք տրամադրում ենք մեր լիարժեք երաշխիքը վերոնշյալ ընկերության կողմից առաջարկվող Ապրանքների համար՝ համաձայն Պայմանագրի ընդհանուր պայմանների 28 դրույթի:

Ստորագրություն՝ *[Արտադրողի լիազոր ներկայացուցչի (ներկայացուցիչների) ստորագրությունը (-ները)]*

Անունը՝ *[Արտադրողի լիազոր ներկայացուցչի (ներկայացուցիչների լրիվ անունը (-ները)]*

Պաշտոնը՝ *[պաշտոնը]*

Թվագրված է՝ ____________ (օրը) __________________, _______ *[ստորագրման ամսաթիվը]*

# Բաժին V. Ընդունելի երկրներ

### Բանկի ֆինանսավորմամբ գնումների ընթացքում Ապրանքների, Աշխատանքների և Ծառայությունների մատուցման ընդունելիություն

Ի գիտություն վարկառուներին և հայտատուներին՝ համաձայն ՏՄՄ 4.7 և 5.1 ենթադրույթների ներկայումս հետևյալ երկրների կազմակերպությունները, ապրանքները և ծառայությունները հանված են մրցույթից.

(ա) Համաձայն ՏՄՄ 4.7(ա) և 5.1 դրույթների մասով՝ **Չկան**

(բ) Համաձայն ՏՄՄ 4.7(բ) և 5.1 դրույթների մասով՝ **Չկան**

# Բաժին VI. Բանկի քաղաքականություն

# Խարդախ և կոռուպցիոն գործելակերպեր

2011թ.-ի հունվարին Համաշխարհային Բանկի Վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման ուղենիշներ ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում:

“**Խարդախություն և կոռուպցիա**

1.16 Ըստ Բանկի քաղաքականության պահանջվում է, որ Վարկառուները (ներառյալ Բանկի վարկերի շահառուները), հայտատուները, մատակարարները, կապալառուները և իրենց գործակալները (հայտարարագրված կամ ոչ), ենթակապալառուները, ենթախորհրդատուները, ծառայություններ մատուցողները կամ մատակարարները և աշխատակազմի որևէ անդամ, հետևեն էթիկայի բարձրագույն չափանիշին Բանկի կողմից ֆինանսավորված պայմանագրերի գնումների և իրականացման ընթացքում:[2] Հետամուտ լինելով սույն քաղաքականությանը՝ Բանկը.

սույն դրույթի նպատակներով սահմանում է հետևյալ պայմանները.

---

[2] Այս համատեքստում ցանկացած գործողություն, որն անպատեհ ազդում է գնումների գործընթացի կամ պայմանագրի կատարման վրա, որպես առավելություն, համարվում է անտեղին:

3 Սույն ենթապարբերության նպատակով «այլ կողմ» նշանակում է պետական պաշտոնյայի, որի գործողությունը կապված է գնումների գործընթացի կամ պայմանագրի իրականացման հետ: Այս համատեքստում «պետական պաշտոնյա» նշանակում է Համաշխարհային Բանկի աշխատակազմ և այլ կազմակերպությունների աշխատակիցներ, որոնք ընդունում կամ վերանայում են գնումների հետ կապված պաշտոնական որոշումները:

4 Սույն ենթապարբերության նպատակով «Կողմ» վերաբերում է պետական պաշտոնյաի. «օգուտ» և «պարտավորություն» եզրերը վերաբերողմ են գնումների գործընթացին կամ պայմանագրի իրականացմանը և «գործողությունը կամ բացթողումը» ենթադրում է ազդեցություն գնումների գործընթացի կամ պայմանագրի իրականացման վրա:

5 Սույն ենթապարբերության նպատակով «Կողմեր» վերաբեռում է գնումների գործընթացի մասնակիցներին (ներառյալ պետական պաշտոնյաների), որոնք փորձում են առաջարկների գները սահմանել արհեստական, ոչ մրցակցային մակարդակում և մասնակցում են մեկը մյուսի հայտի գներին կամ այլ պայմաններին:

6 Սույն ենթապարբերության նպատակով «Կողմ» վերաբերում է գնումների կամ պայմանագրի իրականացման գործընթացի մասնակցին:

(i) «կոռուպցիոն գործելակերպը» այլ կողմի[3] գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու նպատակով ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ արժեք ներկայացնող որևէ բան առաջարկելն է, տալը, ստանալը կամ պահանջելը,

(ii) «խարդախ գործելակերպ» նշանակում է ցանկացած գործողություն կամ բացթողում, ներառյալ փաստերի սխալ ներկայացնելը, որը միտումնավոր կամ ոչ միտումնավոր ձևով փորձում է մոլորության մեջ գցել կողմին՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու նպատակով կամ պարտավորությունից խուսափելու համար[4],

(iii) «նախապես գաղտնի համաձայնեցում» նշանակում է երկու կամ ավելի կողմերի [5] միջև համաձայնության ձեռք բերում անօրեն նպատակների հասնելու համար՝ ներառյալ այլ կողմի գործունեության վրա անօրեն կերպով ազդելը;

(iv) «հարկադրանք» նշանակում է ուղղակի կամ անուղղակի կերպով վնաս հասցնել կամ սպառնալ վնասել այլ կողմի կամ կողմի սեփականությանը՝ կողմի[6] գործունեության վրա անօրեն կերպով ազդելու նպատակով;

(v) «խոչընդոտում» նշանակում է

(աա) հետաքննության նյութերը միտումնավոր վերացնելը, փոփոխելը, կեղծելը կամ թաքցնելը կամ սուտ վկայություններ տալը՝ ըստ էության խոչընդոտելու Բանկի կողմից իրականացվող հետաքննությանը, որը վերաբերում է կոռուպիցայի, խարդախության, հարկադրանքի և գաղտնի համաձայնության մասին հայտարարություններին; և/կամ սպառնալ, հետապնդել կամ ահաբեկել ցանկացած կողմի՝ խոչընդոտելու նրան տարածելու տեղեկություններ հետաքննությանը վերաբերող նյութերի մասին կամ հետաքննություն պահանջելու; կամ

(բբ) գործողություններ, որոնք միտված են ըստ էության խոչընդոտելու Բանկի կողմից հետաքննության և աուդիտի իրականացումը՝ նախատեսված 1.16 (ե)ենթակետով ստորև:

---

(b) կմերժի առաջարկը պայմանագրի շնորհման համար, եթե որոշում է, որ հայտատուն, կամ նրա աշխատակազմը կամ իր գործակալները կամ իր ենթախորհրդատուները, ենթակապալառուները, ծառայություն մատուցողները, մատակարարները և (կամ) իրենց աշխատակիցները, որոնք երաշխավորված է պայմանագրի շնորհման համար տվյալ պայմանագրի համար մրցելիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավվել են կոռուպցիոն, կեղծ, խարդախ, հարկադիր կամ խոչընդոտող գործելակերպերում,

(c) կհայտարարի սխալ գնումներ և չեղյալ կհայտարարի վարկի այն մասը, որը հատկացված է պայմանագրի, եթե այն որոշում է, որ վարկից որևէ եկամուտներ ստացողի կամ Վարկառուի ներկայացուցիչները ցանկացած պահին ներգրավված են կոռուպցիոն, կեղծ, խարդախ, հարկադիր կամ խոչընդոտող գործելակերպերում տվյալ պայմանագրի գնումների կամ իրականացման ընթացքում առանց Վարկառուի կողմից ձեռնարկված ժամանակին և համապատասխան միջոցառումների, որոնք բավարարում են Բանկի պահանջները՝ անդրադառնալու այդ գործելակերպերին, երբ դրանք տեղի են ունենում, ներառյալ Բանկին ժամանակին չտեղեկացնելը այդ գործելակերպերի մասին, երբ դրանց մասին իրենք տեղեկացվում են,

(d) ցանկացած պահին պատժամիջոցներ կկիրառի ընկերության կամ անհատի նկատմամբ համաձայն Բանկի պատժամիջոցների կիրառության ընթացակարգերի[7], այդ թվում՝ հրապարակայնորեն հայտարարելով, որ այդ ընկերությունը կամ անհատը ընդունելի չէ, ոչ անորոշ և ոչ էլ որոշակի ժամանակահատվածի համար (i) շնորհվել Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագիր, և (ii) առաջադրված լինել[8],

---

[7] Ընկերությունը կամ անհատը կարող է հայտարարվել, որ ընդունելի չէ Բանկի կողմից ֆինանսավորվող համաձայնագիր շնորհվելու համար (i) Բանկի կողմից պատժամիջոցների վարույթներն ավարտելուց հետո՝ համաձայն Բանկի կողմից կիրառվող պատժամիջոցների կիրառության ընթացակարգերի, ներառյալ նաև խաչաձև արգելքը՝ համաձայնեցված Միջազգային այլ ֆինանսական հաստատությունների հետ, այդ թվում՝ Բազմակողմանի զարգացման բանկերի հետ, և Համաշխարհային Բանկի Խմբի կողմից սահմանված կեղծիքի և կոռուպցիայի միասնական վարչական գնումների պատժամիջոցների ընթացակարգերի կիրառությամբ, և (ii) ժամանակավոր կասեցման կամ ժամանակավոր վաղ կասեցման արդյունքում՝ կապված պատժամիջոցների շարունակական վարույթի հետ: Տես ստորև բերված 14-րդ ծանոթագրությունը և սույն Ուղենիշների Հավելված 1-ի 8-րդ պարբերությունը:

[8] Առաջադրված ենթակապալառուն, խորհրդատուն, արտադրողը կամ մատակարարը կամ ծառայություն մատուցողը (տարբեր անուններ են օգտագործվում՝ կախված տվյալ մրցութային փաստաթղթից) կամ (i) ներգրավված է եղել հայտի նախաորակավորման իր դիմումի կամ

(e) կպահանջի, որ մրցութային փաստաթղթերում ներառվի մի դրույթ և Բանկի վարկով ֆինանսավորվող պայմանագրերում, որոնք պահանջում են հայտատուներ, մատակարարներ և կապալառուներ և իրենց ենթակապալառուները, գործակալները, անձնակազմը, խորհրդատուները, ծառայություն մատուցողները կամ մատակարարները, թույլատրելու Բանկին ստուգել բոլոր հաշիվները, փաստաթղթերը և հայտերի ներկայացման և պայմանագրի կատարման հետ կապված այլ փաստաթղթեր և ստուգել դրանք Բանկի ստուգողների կողմից¦:

հայտի մեջ, քանի որ նա տիրապետում է կոնկրետ կարևոր փորձի և գիտելիքների, որոնք թույլ են տալիս հայտատուին բավարարել տվյալ հայտի որակավորման պահանջները, կամ (ii) նշանակված է Վարկառուի կողմից:

# Բաժին VIII. Պայմանագրի ընդհանուր պայմաններ

## Բովանդակություն

1. Սահմանումներ ........ 65
2. Պայմանագրի փաստաթղթեր ........ 66
3. Խարդախություն և կոռուպցիա ........ 67
4. Մեկնաբանում ........ 67
5. Լեզու ........ 68
6. Համատեղ ձեռնարկություն կոնսորցիում կամ ընկերակ-ցություն ........ 69
7. Ընդունելիություն ........ 69
8. Ծանուցումներ ........ 70
9. Կարգավորող օրենք ........ 70
10. Վեճերի կարգավորում ........ 70
11. Բանկի կողմից իրականացվող ուսումնասիրություններ և ստուգումներ ........ 71
12. Մատակարարման շրջանակ ........ 71
13. Առաքում և փաստաթղթեր ........ 71
14. Մատակարարի պարտականությունները ........ 72
15 Պայմանագրի գինը ........ 72
16. Վճարման պայմաններ ........ 72
17. Հարկեր և տուրքեր ........ 73

18. Պայմանագրի կատարման երաշխիք........................................................ 73
19. Հեղինակային իրավունք........................................................ 73
20. Գաղտնի տեղեկություններ........................................................ 74
21. Ենթակապալային պայմանագրերի կնքում........................................................ 75
22. Մասնագրեր և չափանիշներ........................................................ 75
23. Փաթեթավորում և փաստաթղթեր........................................................ 76
24. Ապահովագրություն........................................................ 77
25. Փոխադրումներ և օժանդակ ծառայություններ........................................................ 77
26. Ստուգումներ և թեստավորում........................................................ 78
27. Գնահատված վնասահատուցում........................................................ 80
28. Երաշխիք........................................................ 80
29. Արտոնագրի խախտումների փոխհատուցում........................................................ 81
30 Պատասխանատվության սահմանափակումներ........................................................ 83
32. Ֆորս Մաժոր........................................................ 84
33. Փոփոխության հայտեր և Պայմանագրի փոփոխություններ........................................................ 84
34. Ժամկետի երկարաձգում........................................................ 85
35. Դադարեցում........................................................ 86
36. Իրավափոխանցում........................................................ 88

# Բաժին VIII. Պայմանագրի ընդհանուր պայմաններ

**1. Սահմանումներ**

1.1 Սույն Պայմանագրում տեղ գտած հետևյալ բառերը և արտահայտությունները կմեկնաբանվեն այնպես, ինչպես նշված է ստորև՝

(ա) «Բանկ» նշանակում է Համաշխարհային բանկ և վերաբերում է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (ՎԶՄԲ) կամ Միջազգային զարգացման ընկերակցությանը (ՄԶԸ):

(բ) «Պայմանագիր» նշանակում է Գնորդի և Մատակարարի միջև ստորագրված պայմանագիրը՝ ներառյալ դրան կցվող և վերագրվող բոլոր հավելվածները, նյութերը և փաստաթղթերը:

(գ) «Պայմանագրի փաստաթղթեր» նշանակում է Պայմանագրի համաձայնագրում թվարկված փաստաթղթերը՝ ներառյալ ցանկացած կատարված փոփոխություն:

(դ) «Պայմանագրի գին» նշանակում է Պայմանագրի համաձայնագրով հաստատված Մատակարարին վճարվող գինը, որը ենթակա է հնարավոր հավելման կամ փոփոխման կամ նվազեցման՝ Պայմանագրի համաձայն:

(ե) «Օր» նշանակում է օրացուցային օր:

զ) «Ավարտ» նշանակում է Մատակարարի կողմից օժանդակ ծառայությունների իրականացումը՝ համաձայն Պայմանագրում նշված պայմանների:

(է) «ՊԸՊ» նշանակում է Պայմանագրի ընդհանուր պայմաններ:

(ը) «Ապրանքներ» նշանակում է բոլոր այն սարքավորումները, միջոցները և/կամ այլ նյութերը, որոնք, համաձայն Պայմանագրի, Մատակարարը պարտավոր է մատակարարել Գնորդին:

(թ) «Գնորդի երկիր» նշանակում է այն երկիրը, որը հատկորոշված է Պայմանագրի հատուկ պայմաններով (ՊՀՊ):

(ժ) «Գնորդ» նշանակում է Ապրանքներ և օժանդակ ծառայություններ ձեռք բերող կազմակերպություն՝ համաձայն ՊՀՊ-ի:

(ի) «Հարակից ծառայություններ» նշանակում է այն ծառայությունները, որոնք կապված են այնպիսի ծառայությունների մատակարարման հետ, ինչպիսք են ապահովագրությունը, տեղադրումը/ներդնումը, ուսուցումը և նախնական սպասարկումը, ինչպես նաև Պայմանագրով ամրագրված Մատակարարի նմանօրինակ պարտավորությունները:

(լ) «ՊՀՊ» նշանակում է Պայմանգրի Հատուկ Պայմաններ:

(խ) «Ենթակապալառու» նշանակում է ցանկացած անձ, անհատ կամ պետական ձեռնարկություն, կամ դրանց համակցությունը, որը ընտրվում է Մատակարարի կողմից՝ ենթակապալի պայմանագրով ստանձնելով Հարակից ծառայությունների կամ Ապրանքների ցանկացած մասի մատակարարումը կամ իրականացումը:

(ծ) «Մատակարար» նշանակում է ցանկացած անձ, մասնավոր կամ պետական ձեռնարկություն, որի՝ Պայմանագիրը իրականացնելու հայտը ընդունվել է Գնորդի կողմից և որը հատկորոշված է որպես այդպիսին Պայմանագրի վերաբերյալ համաձայնագրում:

(a) (կ) «Ծրագրի իրականացման վայր», որտեղ կիրառելի է, նշանակում է ՊՀՊ-ում նշված վայրը:

**2. Պայմանագրի փաստաթղթեր**

2.1 Պայմանագրի վերաբերյալ համաձայնագրում նախընտրելի կարգով նշված բոլոր փաստաթղթերը, որոնք կազմում են Պայմանագիրը, ինչպես նաև դրանց կազմող մասերը պետք է լինեն փոխկապակցված, համապատասխանեն և փոխլրացնեն միմյանց և լինեն փոխադարձ բացատրելի: Պայմանագրի

համաձայնագիր պետք է կարդացվի/ընկալվի՝ որպես մեկ ամբողջական փաստաթուղթ:

**3. Խարդախություն և կոռուպցիա**

3.1 Բանկը պահանջում է համապատասխանություն իր քաղաքականությանը՝ կապված կոռուպցիոն և կեղծ գործելակերպերի հետ, ինչպես սահմանված է ՊԸՊ հավելվածում:

3.2 Գնորդը պահանջում է, որ Մատակարարը բացահայտի գործակալներին կամ որևէ այլ կողմին վճարված կամ վճարվելիք ցանկացած կոմիսիոն կամ այլ վճարներ՝ մրցութային գործընթացի կամ Պայմանագրի կատարման հետ կապված: Բացահայտված տեղեկությունները պետք է ներառեն գործակալի կամ այլ կողմի առնվազն անվանումը և հասցեն, գումարը և արժույթը, կոմիսիայի, դրամական պարգևի կամ վճարի նպատակը:

**4. Մեկնաբանում**

4.1 Ըստ համատեքստի՝ եզակի թիվը կարող է փոխարինել հոգնակիին և ընդհակառակն:

4.2 Միջազգային առևտրային տերմիններ (Incoterms)

EXW եզրույթը ղեկավարվում է Փարիզում, Ֆրանսիա, Առևտրի միջազգային պալատի կողմից հրատարակված Incoterms-իընթացիկ հրապարակմամբ ներկայացված կանոններով՝ համաձայն ՊՀՊ-ի:

4.3 Պայմանագիրը ամբողջությամբ

Պայմանագիրը իրենից ներկայացնում է Գնորդի և Մատակարարի միջև համաձայնագիր և ուժը կորցրած է դարձնում կողմերի միջև եղած բոլոր հաղորդակցությունները, բանակցությունները և համաձայնագրերը (լինեն դրանք գրավոր կամ բանավոր), որոնք գոյություն են ունեցել մինչ Պայմանագրի ուժի մեջ մտնելը:

4.4 Փոփոխություններ

Պայմանագրի որևէ փոփոխություն կամ այլ տարատեսակ վավերական է միայն այն դեպքում, եթե այն ներկայացված է գրավոր տեսքով, թվագրված է,

բացահայտ կերպով վերաբերում է Պայմանագրին և ստորագրված է կողմերի՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների կողմից:

4.5 Հրաժարման իրավունքի բացակայություն

(ա) Պայմանավորված ՊԸՊ 4.5 (բ) դրույթով ստորև՝ ցանկացած կողմի՝ Պայմանագրի պայմանների և դրույթների կատարման հետաձգումը, կատարումից հրաժարվելը կամ կատարման հետ կապված արտոնությունները կամ կողմերից մեկի կողմից մյուսին տրված ժամանակը չպետք է վնասի, ներգործի կամ սահմանափակի այդ կողմի իրավունքները Պայմանագրի հետ կապված, ինչպես նաև կողմերից որևէ մեկի հրաժարումը Պայմանագրի ցանկացած խախտումից չի հանդիսանա հրաժարում Պայմանագրի հաջորդող կամ շարունակական խախտումերից:

(բ) Պայմանագրի շրջանակներում որևէ կողմի՝ իրավունքներից, իրավասություններից կամ իրավական պաշտպանության միջոցներից հրաժարվելը պետք է լինի գրավոր, թվագրված և ստորագրված այդպիսի հրաժարում տրամադրող կողմի լիազոր ներկայացուցչի կողմից և պետք է հստկորոշի այդ իրավունքը և դրանից հրաժարվելու շրջանակը:

4.6 Պայմանագրի վավերականություն՝ որևիցե դրույթ անվավեր ճանաչելու դեպում

Եթե Պայմանագրի որևէ դրույթ կամ պայման արգելվում, անվավեր կամ ճանաչվում է հարկադիր կատարման ոչ ենթակա, ապա այդ արգելումը, անվավեր կամ հարկադիր կատարման ոչ ենթակա լինելը չեն ազդում Պայմանագրի այլ դրույթների և պայմանների վավերականության կամ հարկադրաբար կատարման վրա:

**5. Լեզու**

5.1 Պայմանագիրը, ինչպես նաև Գնորդի և Մատակարաի միջև Պայմանագրին վերաբերող ամբողջ համապատասխան նամակագրությունը պետք է լինի ՊՀՊ-ում հստկորոշված լեզվով: Հայտի մաս կազմող լրացուցիչ փաստաթղթերը և տպագրված գրականությունը կարող են լինել այլ լեզվով, եթե առկա

է դրանց համապատասխան մասերի/պարբերությունների պատշաճ թարգմանությունը հատկորոշված լեզվով, և այդ դեպքում, Պայմանագրի մեկնաբանության նպատակով, գերեկայում է այդ թարգմանությունը:

5.2 Մատակարարը պետք է իր վրա վերցնի ներկայացված փաստաթղթերի թարգմանության բոլոր ծախսերը և թարգմանության ճշգրտության հետ կապված բոլոր ռիսկերը՝ իր կողմից ներկայավող փաստաթղթերի համար:

**6. Համատեղ ձեռնակություն կոնսորցիում կամ ընկերակ-ցություն**

6.1 Եթե Մատակարարը համատեղ ձեռնարկություն է, կոնսորցիում կամ ընկերակցություն, բոլոր կողմերը պետք է հավասարաչափ և հստակորեն իրավազոր/իրավաբանորեն պարտավորություններ կրեն Գնորդի հանդեպ՝ Պայմանագրի դրույթների կատարման համար և պետք է մի կողմին նշանակեն, որպեսզի այն գործի որպես առաջատար՝ Համատեղ ձեռնարկությանը, կոնսորցիումին կամ ընկերակցությանը պարտավորություններով կապելու իրավունքով: Համատեղ ձեռնարկության, կոնսորցիումի կամ ընկերակցության կառուցվածքը չպետք է փոփոխվի՝ առանց Գնորդի նախնական համաձայնության:

**7. Ընդունելիություն**

7.1 Մատակարարը և Ենթակապալառուները և պետք է ընդունելի երկրների քաղաքացիություն ունենան: Մատակարարը կամ ենթակապալառուները ունեն որևէ երկրի քաղաքացիություն, եթե Հայտատուն որևէ երկրի քաղաքացիություն, կամ, եթե ձևավորվել են, ներգրավվել կամ գրանցվել են և գործում են՝ համաձայն այդ պետության օրենսդրության:

7.2 Բանկի կողմից ֆինանսավորվող և Պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող բոլոր ապրանքները և օժանդակ ծառայությունները ծագումով կլինեն Ընդունելի Երկրներից: Այս դրույթի նպատակների համար «ծագում» նշանակում է այն երկիրը, որտեղ ապրանքները աճեցվել, հանքից են ստացվել, բուծվել, արտադրվել կամ մշակվել են, կամ այլ առևտրայնորեն ճանաչված իր, որը իր հիմնական հատկանիշներով

տարբերվում է իր բաղադրիչներից:

**8. Ծանուցումներ**

8.1 Սույն Պայմանագրի համաձայն ցանկացած ծանուցում պետք է ներկայացնել գրավոր կերպով՝ ՊՀՊ-ում նշված հասցեով: «Գրավոր» տերմինը նշանակում է հաղորդակցվել գրավոր կերպով՝ համապատասխան ստացականի առկայությամբ:

8.2 Ծանուցումը ուժի մեջ կլինի ստացման պահից կամ ծանուցման՝ ուժի մեջ մտնելու ամսաթվից՝ կախված նրանից, թե որ ամսաթիվն է ավելի ուշ:

**9. Կարգավորող օրենք**

9.1 Սույն Պայմանագիրը պետք է կարգավորվի և մեկնաբանվի Գնորդի երկրի օրենսդրությանը համապատասխան:

**10. Վեճերի կարգավորում**

10.1 Գնորդը և Մատակարարը, Պայմանագրի կատարման ընթացքում, պետք է բոլոր ջանքերը կիրառեն՝ ուղղակի, ոչ պաշտոնական բանակցությունների միջոցով բարեկամաբար լուծելու իրենց միջև ծագած տարաձայնությունները կամ վեճերը:

10.2 Եթե, քսանութ (28) օրվա ընթացքում, կողմերը չեն կարողանում լուծել վեճը կամ տարաձայնությունները փոխադարձ բանակցությունների միջոցով, ապա Գնորդը կամ Մատակարարը ծանուցում է ուղարկում մյուս կողմին՝ նշելով իր արբիտրաժ դիմելու մտադրության մասին, ինչպես նշված է ստորև և կողմերը կարող են դիմել արբիտրաժ միայն այդ ծանուցումն ուղարկելուց հետո: Ցանկացած վեճ կամ տարաձայնություն, որի համար այս կետի համաձայն տրվել է արբիտրաժ դիմելու մասին ծանուցումը, պետք է վերջնականապես կարգավորվի արբիտրաժի կողմից: Արբիտրաժի գործնեությունը կարող է սկսվել Պայմանագրով Ապրանքների առաքումից առաջ կամ հետո: Արբիտրաժային վարման կարգը պետք է համապատասխանի **ՊՀՊ-ում** հատկորոշված վարման կանոններին:.

10.3 Անկախ արբիտրաժ դիմելուց՝

(ա) կողմերը պետք է շարունակեն կատարել Պայմանագրով հատկացված իրենց պարտականությունները՝ այլ

պայմանավորվածություն չունենալու դեպքում, և

(բ) Գնորդը պետք է վճարի Մատակարարին հասանելի ցանկացած գումարներ:

**11. Բանկի կողմից իրականացվող ուսումնասիրություններ և ստուգումներ**

11.1 Մատակարարը պետք է վարի և բոլոր ջանքերը գործադրի և իր Ենթակապալառուներից պահանջի վարել ճշգրիտ և համակարգված հաշիվներ և արձանագրություններ՝ կապված Ապրանքների այն ձևերի և մանրամասների հետ, որոնք հստակ կերպով ցույց կտան համապատասխան ժամանակային փոփոխությունները և ծախսերը:

11.2 Մատակարարը թույլ կտա Բանկին և/կամ Բանկի կողմից նշանակված անձանց տեսչական ստուգումներ իրականացնել Մատակարարի գրասենյակներում, ստուգել Պայմանագրի կատարման և հայտի ներկայացման հետ կապված բոլոր հաշիվները և արձանագրությունները, թույլ կտա Բանկի պահանջով Բանկի կողմից նշանակված հսկիչներին իրականացնել վերոնշյալ հաշիվների և արձանագրությունների ստուգում և նույնը կպահանջի իր Ենթակապալառուներից և խորհրդատուներից: Մատակարարը և նրա Ենթակապալառուները և խորհրդատուները պետք է ուշադիր լինեն դրույթ 3-ի բովանդակությանը [Խարդախություն և կոռուպցիա], որը, ի թիվս այլոց, նախատեսում է, որ այն գործողությունները, որոնք միտված են էապես խանգարել ստուգումներ և աուդիտ իրականացնելու Բանկի իրավունքներին՝ համաձայն սույն 11.1 ենթակետի, հանդիսանում են արգելված գործունեություն, որը կհանգեցնի Պայմանագրի դադարեցմանը (ինչպես նաև անընդունելի հայտարարվելու որոշմանը՝ համաձայն Բանկի պատժամիջոցների մասին ընթացակարգերի):

**12. Մատակարարման շրջանակ**

12.1 Մատակարարվելիք Ապրանքները և օժանդակ ծառայությունները պետք է հստակորոշված լինեն Պահանջների ցանկում:

**13. Առաքում և**

13.1 Ըստ ՊԸՊ-ի 33.1 ենթադրույթի, Ապրանքների առաքումը և օժանդակ ծառայությունների տրամադրման ավարտը

| | | |
|---|---|---|
| **փաստաթղթեր** | | կիրականացվի համաձայն Առաքման և Ավարտի ժամանակացույցի (Պահանջների ցանկ)։ Փոխադրման մանրամասները և այլ փաստաթղթեր, որոնք պետք է ներկայացվեն Մատակարարի կողմից, հատկորոշված են **ՊՀՊ**-ում։ |
| **14.Մատակարարի պարտական-ությունները** | 14.1 | Մատակարարը պետք է մատակարարի բոլոր Ապրանքները և օժանդակ ծառայությունները՝ համաձայն ՊԸՊ-ի 12-րդ դրույթի (Մատակարարման շրջանակ) և ՊԸՊ-ի 13-րդ դրույթի (Առաքման և ավարտի ժամանակացույց)։ |
| **15 Պայմանագրի գինը** | 15.1 | Մատակարարի կողմից ըստ Պայմանգրի առաքվող Ապրանքների և մատուցվող օժանդակ ծառայությունների դիմաց պահանջվող գները չպետք է տարբերվեն Մատակարարի հայտում նշված գներից։ |
| **16. Վճարման պայմաններ** | 16.1 | Պայմանագրի գինը, ներառյալ Կանխավճարները, կիրառելիության դեպքում, պետք է վճարվեն՝ համաձայն **ՊՀՊ-ի**։ |
| | 16.2 | Մատակարարը վճարման պահանջը պետք է ներկայացնի Գնորդին գրավոր ձևով և կից ներկայացնի վճարման պահանջագրերը՝ ռաքված Ապրանքների և մատուցված Ծառայությունների նկարագրությամբ, ինչպես նաև ՊԸՊ-ի 13րդ դրույթում նշված փաստաթղթերը։ Վճարման պահանջը պետք է ներկայացվի Մատակարարի կողմից Պայմանագրվ ստանձնած բոլոր մյուս պարտավորությունները կատարելուց հետո։ |
| | 16.3 | Վճարումները Գնորդի կողմից պետք է կատարվեն անհապաղ, սակայն Մատակարարի կողմից ապրանքագրի կամ պահանջի նեկայացման և Գնորդի ստանալու պահից ոչ ուշ քան վաթսուն (60) օրվա ընթացքում։ |
| | 16.4 | Վճարումները Մատակարարին կիրականացվեն Գնորդի ազգային արժույթով։ |
| | 16.5 | Այն դեպքում, եթե Գնորդը վճարում չի կատարում Մատակարարին վճարման օրը կամ ՊՀՊ-ում նշված ժամկետի շրջանակներում, ապա Գնորդը պետք է |

Մատակարարին վճարի տոկոս վճարումը հետաձգելու համար՝ ՊՀՊ-ում նշված դրույքաչափով, մինչև լրիվ վճարման կատարումը և ուշացման ժամանակահատվածի համար՝ դատարանի կամ արբիտրաժի որոշումից առաջ կամ հետո:

**17. Հարկեր և տուրքեր**

17.1 Շրջանառության բոլոր հարկերը, տուրքերը, եթե կան, ներառված են Պայմանագրի գնի մեջ:

**18. Պայմանագրի կատարման երաշխիք**

18.1 Պայմանագրի շնորհման վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում Մատակարարը, ՊՀՊ-ի պայմանների համաձայն, պետք է ներկայացնի Պայմանագրի կատարման երաշխիք՝ **ՊՀՊ**-ում նշված գումարի չափով:

18.2 Երաշխիքի գումարը ենթակա է Գնորդին վճարման սույն Պայմանագրով ամրագրված Մատակարարի որևէ պարտականության չկատարման դեպքում՝ որպես դրանից բխող վնասների փոխհատուցում:

18.3 Կատարման երաշխիքը վճարվում է Պայմանագրով սահմանված արժույթով, կամ Գնորդի համար ընդունելի ազատ փոխարկելի որևէ արժույթով և արտահայտվում է Գնորդի համար ընդունելի՝ ՊՏՊ-ում ամրագրված ձևով, կամ Գնորդին հարմար այլ ձևով:

18.4 Պայմանագրի կատարման երաշխիքը Գնորդը կվերադարձնի Մատակարարին սույն Պայմանագրով ամրագրված Մատակարարի պարտականությունների, այդ թվում նաև ցանկացած երաշխավորման պարտականությունների կատարման ավարտից հետո ոչ ուշ քան քսանութ (28) օր անց, եթե այլ կերպ նշված չէ ՊՀՊ-ում:

**19. Հեղինակային իրավունք**

19.1 Մատակարարի կողմից Գնորդին ներկայացված բոլոր գծագրերի, փաստաթղթերի և տվյալներ և տեղեկատվություն պարունակող բոլոր փաստաթղթերի հեղինակային իրավունքը պետք է պատկանի Մատակարարին կամ, եթե դրանք Գնորդին ներկայացվում են ուղղակի կամ որևէ երրորդ կողմի միջոցով, ներառելով նյութերի մատակարարներին, ապա այդ նյութերի հեղինակային իրավունքը պետք է

պատկանի մատակարարող երրորդ կողմին:

**20. Գաղտնի տեղեկություններ**

20.1 Գնորդը և Մատակարարը գաղտնի կպահեն և առանց երրորդ կողմի գրավոր համաձայնության չեն հրապարակի/տրամադրի մեկ այլ կողմի որևէ փաստաթուղթ, տվյալ կամ այլ տեղեկատվություն, որը ներկայացվել է Պայմանագրի իրականացման հետ կապված կողմից մեկի կողմից, անկախ այն փաստից, թե այդ տեղեկատվությունը ներկայացվել է պայմանագրի կատարման կամ դադարեցման ընթացքում, մինչ այդ կամ դրա ավարտից հետո: Չնայած վերոնշյալի՝ Մատակարարը կարող է իր ենթակապալառուին ներկայացնել Գնորդից ստացված այնպիսի փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկատվություն, որոնք պահանջվում են Պայմանագիրը կատարելու համար: Այդ դեպքում, Մատակարարը պետք է ենթակապալառուից պահաջի գաղտնիությունը պահպանելու նույն պարտավորվածությանը, որին ենթակա է Մատակարարը ինքը՝ համաձայն ՊԸՊ-ի 20-րդ դրույթի:

20.2 Գնորդը չի օգտագործի Մատակարարի կողմից ստացված այնպիսի փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկատվություն, որոնք չեն վերաբերում պայմանագրին: Նմանապես, Մատակարարը չպետք է օգտագործի Գնորդի կողմից ստացված այնպիսի փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկատվություն, որոնք չեն վերաբերում Պայմանագրի կատարմանը:

20.3 Համաձայն ՊԸՊ-ի 20.1 և 20.2 ենթադրույթների կողմերի ստանձնած պարտավորությունները, այնուամենայնիվ, չեն վերաբերում հետևյալին՝

(ա) Գնորդին կամ Մատակարարին անհրաժեշտ է Բանկի կամ Պայմանագրի ֆինանսավորմանը մանսակցող այլ հաստատությանը տեղեկացնել/տվյալներ փոխանցել;

(բ) տեղեկությունները տվյալ պահին կամ հեռագայում հանրությանը հայտնի են դառնում ոչ կողմերից որևէ մեկի մեղքով;

(գ) հնարավոր է ապացուցել, որ տեղեկությունները արդեն հայտնի են եղել այդ կողմին բացահայտման պահին և դրանք նախքինում մյուս կողմը չի հաղորդվել՝ ուղղակի կամ անուղղակի ճանապարհով; կամ

(դ) այլ կերպ օրինական ճանապարհով տեղեկությունները հաղորդվել են այդ կողմին մի երրորդ կողմի կողմից, որը գաղտնիության պարտավորություն չունի:

20.4 ՊԸՊ-ի 20-րդ դրույթի վերոնշյալ կետերը, ոչ մի դեպքում, չպետք է փոխեն որևիցէ կողմի՝ գաղտնիությունը պահպանելու պարտավորությունը, որը այն ստանձնել է մինչ Պայմանագրի ստորագումը՝ մատակարաման կամ այլ մասի կատարման հետ կապված:

20.5 ՊԸՊ-ի 20-րդ դրույթի կետերը կպահպանվեն մինչ Պայմանագրի՝ կատարման ավարտը կամ դադարեցումը՝ անկախ պատճառներից:

**21. Ենթակապալային պայմանագրեր ի կնքում**

21.1 Մատակարարը պետք է Գնորդին գրավոր կերպով ծանուցի բոլոր շնորհված ենթակապալային պայմանագրերի մասին, եթե դրանք արդեն նշված չեն հայտում: Այդպիսի ծանուցումը, սկզբնական հայտում կամ հետագա հայտում, չպետք է Մատակարարին ազատահի իր պարտականություններից, պարտավորություններից կամ իրավասություններից՝ Պայմանագրի հետ կապված:

21.2 Ենթակապալի պայմանագրերը կհամապատասխանեն ՊԸՊ-ի 3 և 7 դրույթներին:

**22. Մասնագրեր և չափանիշներ**

22.1 Տեխնիկական մասնագրեր և գծագրեր

(ա) Պայմանագրի շրջանակներում մատակարարվող Ապրանքները և օժանդակ ծառայությունները պետք է համապատասխանեն VI Մասում (Պահանջների ցանկ) նշված տեխնիկական մասնագրերին և չափանշներին և, եթե նշված չէ որևէ կիրառելի չափանիշ, ապա այն պետք է հավասարազոր լինի պաշտոնապես ընդունված, Ապրանքների ծագման երկրին համապատասխան

չափանիշներին կամ գերազանցի դրանք:

(բ) Մատակարարը պետք է իրավունք ունենա հրաժարվել պատասխանատվություն կրել Գնորդի կողմից տրամադրված կամ իրականացված որևէ դիզայնի, տվյալի, գծագրի, մասնագրի կամ այլ փաստաթղթի և դրանց ձևափոխված տարբերակների հետ կապված՝ նախորոք տեղյակ պահելով Գնորդին:

(գ) Այն դեպքերում, երբ Պայմանագրում հղումներ են արվում կանոնների և չափանիշների, համաձայն որոնց կատարվում է Պայմանագիրը, այդ կանոնների և չափանիշների խմբագրված կամ փոփոխված տարբերակները պետք է լինեն Պահանջների ցանկում նշվածները: Պայմանագրի իրականացման ընթացքում, այդպիսի կանոններում և չափանիշներում որևէ փոփոխությունները պետք է կիրառվեն միայն Գնորդի հաստատումից հետո և օգտագործվեն՝ համաձայն ՊԸՊ-ի 33-րդ դրույթի:

**23. Փաթեթավորում և փաստաթղթեր**

23.1 Մատակարարը պարտավոր է պատշաճ կերպով փաթեթավորել Ապրանքները՝ մինչև վերջնական նշանակման վայրը ապահով, առանց վնասի և մաշվածության դրանք փոխադրելու նպատակով՝ համաձայն Պայմանագրի: Փաթեթավորումը պետք է բավականին ապահով և դիմացկուն լինի փոխադրման ընթացքում հնարավոր ազդեցությունների նկատմամբ՝ անփույթ գործածման, բարձր և ցածր ջերմաստիճանների, աղի, խոնավ կամ բացօդյա պայմանների: Փաթեթավորման արկղերի և տուփերի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել վերջնական նշանակման վայրի հեռավորությունը, ինչպես նաև ծանր բեռների բեռնաթափման համար անհրաժեշտ սարքավորումների առկայությունն այդ վայրերում տարանցիկ փոխադրման ժամանակ:

23.2 Փաթեթների ներքին և արտաքին փաթեթավորումը, նշումները և փաստաթղթերը պետք է խստորեն համապատասխանեն Պայմանագրով ամրագրված հատուկ պահանջներին, ներառյալ՝ ՊՀՊ-ում նշված լրացուցիչ պահանջները, եթե այդպիսիք կան, ինչպես

նաև Գնորդի կողմից ներկայացված ցանկացած այլ հրահանգներին:

**24. Ապահովագրություն**

24.1 Ապահովագրությունը EXW-ից մինչև վերջնական նշանակման վայր ներառված է պայմանագրի գնի մեջ:

**25. Փոխադրումներ և օժանդակ ծառայություններ**

25.1 Մատակարարը պատասխանատու է Ապրանքները վերջնական նշանակման վայր փոխադրման համար, ինչպես նշված է ՊԸՊ (ՊՀՊ) 1.1 (մ) դրույթում:

25.2 Մատակարարից կարող է պահանջվել հետևյալ ծառայություններից որևէ մեկը կամ բոլորը, ներառյալ լրացուցիչ ծառայությունները, եթե դրանք նախանշված են **ՊՀՊ**-ում.

(a) Մատակարարված Ապրանքների տեղում իրականացվող հավաքում և (կամ) գործարկում,

(b) Մատակարարված Ապրանքների հավաքման և (կամ) սպասարկման համար անհրաժեշտ գործիքների տրամադրում,

(c) Մատակարարված Ապրանքների յուրաքանչյուր միավորի համար մանրամասն գործարկման և սպասարկման վերաբերյալ ձեռնարկի տրամադրում,

(d) Մատակարարված Ապրանքների գործարկում, վերահսկում, սպասարկում և/կամ վերանորոգում կողմերի միջև համաձայնեցված ժամկետով, եթե սույն Պայմանագրով այս ծառայությունը Մատակարարին չի ազատում երաշխիքային պարտավորություններից, և

(e) Գնորդի աշխատակազմի ուսուցում Մատակարարի գործարանում և /կամ տեղում, Մատակարարված

Ապրանքների հավաքման, գործարկման, սպասարկման և/կամ վերանորոգման գծով:

25.3 Մատակարարի կողմից հավելյալ ծառայությունների համար գանձվող գներ, եթե վերջիններս չեն ներառվել Ապրանքների Պայմանագրի Գնի մեջ, պետք է նախօրոք համաձայնեցվեն այն կողմերի միջև և չպետք է գերազանցեն Մատակարարի կողմից նմանատիպ ծառայությունների համար այլ կողմերից գանձվող առկա դրույքաչափերը:

**26. Ստուգումներ և թեստավորում**

26.1 Մատակարարը բացառապես իր հաշվին կիրականացնի Ապրանքների և օժանդակ ծառայությունների բոլոր այդպիսի թեստերը և/կամ ստուգումները, ինչպես հատկորոշված է **ՊՀՊ-ում**:

26.2 Ստուգումները և թեստավորումը կարող են իրականացվել Մատակարարի կամ նրա ենթակապալառուի գրասենյակներում (շինություններում), առաքման կետում և/ կամ Ապրանքների վերջնական նշանակման վայրում, կամ Գնորդի երկրի որևէ այլ վայրում, որը հատկորոշված է ՊՀՊ-ում: Համաձայն ՊԸՊ 26.3 դրույթի՝ եթե ստուգումները իրականացվում են Մատակարարի կամ նրա ենթակապալառուներից մեկի Գրասենյակներում, ապա ստուղումներն անցկացնող հսկիչներին պետք է տրամադրվեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և պայմանները, ներառյալ գծագրերը և արտադրման մասին տվյալները և ցանկացած այլ աջակցություն՝ անվճար Գնորդի համար:

26.3 Գնորդը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը իրավունք ունի ներկա գտնվել ստուգումներին և/կամ թեստավորմանը, որոնք նախատեսված են ՊԸՊ 26.2 դրույթով՝ պայմանով, որ այդ ներկայության հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ ճանապարհածախսը և բնակության ծախսերը կհոգա Գնորդը:

26.4 Երբ Մատակարարը պատրաստ կլինի անցկացնել ստուգում և / կամ թեստավորում, նա պետք է ողջամիտ ժամկետում նախօրոք Գնորդին տեղյակ պահի դրա մասին, ինչպես նաև հայտնի իրականացման վայրը և

ժամանակը: Մատակարարը կստանա համապատասխան երրորդ կողմի կամ արտադրողի թույլատվությունը կամ համաձայնությունը առ այն, որ Գնորդը կամ իր ներկայացուցիչը ներկա գտնվեն ստուգումների և/կամ թեստավորման անցկացման ժամանակ:

26.5 Գնորդը կարող է Մատակարարից պահանջել իրականացնել ցանկացած թեստավորում և/կամ ստուգում, որը նախատեսված չէ Պայմանագրով, սակայն համարվում է անհրաժեշտ՝ հաստատելու համար, որ Ապրանքների բնութագրերը և աշխատանքային պարամետրերը համապատասխանում են Պայմանագրում նշված տեխնիկական մասնագրերի կանոններին և չափանիշներին՝ պայմանով, որ Մատակարարը կառաջարկի ողջամիտ արժեք այդ տեսակի թեստավորում և/կամ ստուգում իրականացնելու համար, որը կավելացվի Պայմանագրի գնին: Բացի այդ, եթե նմանօրինակ թեստավորումը և/կամ ստուգումը խափանում է արտադրության գործընթացը, և/կամ Մատակարարի կողմից իր պայմանագրային պարտավորությունների կատարումը, ապա Առաքման ամսաթվերի և աշխատանքների ավարտի ժամկետների, ինչպես նաև այլ համապատասխան պարտավորությունների հետ կապված կլինեն զիջումներ:

26.6 Մատակարարը Գնորդին կտրամադրի ցանկացած այդպիսի թեստավորման և/կամ ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

26.7 Գնորդը կարող է մերժել այն Ապրանքները կամ դրանց ցանկացած բաղադրիչ, որոնք չեն անցել թեստավորումը և/կամ ստուգումը կամ չեն համապատասխանում մասնագրերի պահանջներին: Մատակարար կամ կվերացնի թերությունները, կամ էլ կփոխարինի այդպիսի Ապրանքները կամ դրանց մասերը, կամ էլ կիրականացնի անհրաժեշտ փոփոխություններ՝ համապատասխանեցնելու դրանք մասնագրերին և նորից կանցկացնի թեստավորումը և/կամ ստուգումը՝ դրա

մասին նախապես ծանուցում ուղարկելով՝ համաձայն ՊԸՊ 26.4 ենթակետի: Այդ ամենը կիրականացվի առանց Գնորդի համար ավելորդ ծախսագոյացման:

26.8 Մատակարարը համաձայն է, որ ոչ Ապրանքների կամ դրանց մասերի թեստավորման և/կամ ստուգման իրականացումը, ոչ Գնորդի կամ նրա ներկայացուցչի ներկա գտնվելու փաստը և ոչ էլ ՊԸՊ 26.6 ենթակետի համաձայն որևէ հաշվետվության հրապարակումը չի ազատում նրան Պայմանագրով ստանձնած պարտավորություններից կամ պայմանների կատարման պատասխանատվությունից:

**27. Գնահատված վնասահատուցում**

27.1 Բացառությամբ ՊԸՊ 32 դրույթով նախատեսվածի՝ եթե Մատակարարը թերանում է մատակարարել որևիցէ Ապրանք կամ բոլոր ապրանքները Առաքման ժամկետի համաձայն կամ մատուցել օժանդակ ծառայությունները Պայմանագրում նշված ժամանակահատվածի ընթացքում, ապա չվնասելով Պայմանագրով նախատեսված իր մնացած բոլոր միջոցներին, Գնորդը կարող է որպես գնահատված վնասահատուցում Պայմանագրի գնից գումար հանել, որը համարժեք կլինի ՊՀՊ-ում նշված ուշացած Ապրանքների կամ չմատուցած Ծառայությունների կամ դրանց մասերի գնին յուրաքանչյուր ուշացած շաբաթվա համար մինչ դրանց առաքումը և իրականացումը: Այդ գումարը կարող է հասնել ՊՀՊ-ում նշված մաքսիմալ սահմանին: Այդ դեպքում, համաձայն ՊԸՊ 35 կետի, Գնորդը կարող է կասեցնել պայմանագիրը:

**28. Երաշխիք**

28.1 Մատակարարը երաշխավորում է, որ մատակարարվող Ապրանքները նոր են, չօգտագործված, համապատասխանում են գծագրման և նյութերի նորագույն տեխնոլոգիաներին և մոդելներին, եթե Պայմանագրով այլ բան չի նախատեսվում:

28.2 Համաձայն ՊԸՊ 22.1 (բ) ենթակետի՝ Մատակարարը նաև երաշխավորում է, որ սույն Պայմանագրով մատակարարվող Ապրանքները չեն ունենա որևէ թերություն Մատակարարի կողմից թույլ տված որևէ թերացման կամ դիզայնի, նյութերի և ապրանքի արտադրման որակի պատճառով, որը կարող է ի հայտ

գալ վերջնական նշանակման վայրում գերակշռող պայմաններում ճիշտ օգտագործման ժամանակ:

28.3 ՊՀՊ-ում այլ կերպ չնշվելու դեպքում, այս երաշխիքը ուժի մեջ է տասներկու (12) ամսվա ընթացքում՝ Գնորդի երկրում ՊՀՊ-ում նշված վերջնակետում Ապրանքների կամ դրանց մի մասի առաքման և ընդունման օրից կամ 18 ամսվա ընթացքում՝ առաքող երկրի նավահանգստից կամ բեռնման վայրից առաքման օրից, կախված նրանից, թե որ ժամանակահատվածն է լրանում ավելի շուտ:

28.4 Ցանկացած թերության մասին Գնորդը գրավոր կերպով անհապաղ կծանուցի Մատակարարին՝ նշելով այդ թերության մանրամասները և այն ապացուցող նյութերը՝ այդ թերությունը հայտնաբերելուց անմիջապես հետո: Գնորդը պետք է Մատկարարի համար հնարավորություն ստեղծի թերությունները ուսումնասիրելու համար:

28.5 Թերությունների մասին ծանուցում ստանալուց հետո Մատակարարը, ՊՀՊ-ում որոշված ժամանակահատվածում, հնարավորին չափ արագ կվերանորոգի Ապրանքները, կամ փոխարինի դրանք կամ դրանց մասերը՝ առանց Գնորդի լրացուցիչ ծախսերի:

28.6 Եթե Մատակարարը ծանուցում ստանալուց հետո ՊՀՊ-ում նշված ժամանակահատվածում չի վերացնում անսարքությունները, Գնորդը կարող է այդ աշխատանքները կատարի Մատակարարի հաշվին, առանց խախտելու սույն Պայմանագրով Մատակարարի նկատմամբ Գնորդի ունեցած ցանկացած այլ իրավունք:

**29. Արտոնագրի խախտումների փոխհատուցում**

29.1 Պայմանավորված Գնորդի՝ ՊԸՊ 29.2 ենթակետի պայմանների կատարմամբ, Մատակարարը կփոխհատուցի և զերծ կպահի Գնորդին և նրա աշխատողներին ցանկացած և բոլոր վարչական գործընթացներից, դատական հայցերից, պահանջներից, վնասներից, ծախսերից, ներառյալ՝ իրավաբանի ծախսերը, որոնք կարող են ծագել արտոնագրի, օգտակար մոդելի, գրանցված նմուշի, ապրանքանիշի, հեղինակային իրավունքի կամ այլ մտավոր սեփականության իրավունքի խախտման

դեպքում, եթե այն գրանցված է եղել պայմանագրի ստորագրման պահին հետնյալ նպատակով.

(ա) Մատակարարի կողմից ապրանքների տեղադրում կամ օգտագործում այն երկրում, որտեղ տեղակայված է Գնորդի վերջնական վայրը, և

(բ) Ապրանքի միջոցով արտադրված արտադրանքի վաճառքը որևէ երկրում:

Նման փոխհատուցումը չի ներառում Ապրանքների կամ դրանց մասերի օգտագործումը, եթե դա հիմնավորված չէ կամ չի ենթադրվում Պայմանագրով, ինչպես նաև այն չի ներառում ապրանքների կամ դրանց ցանկացած մասի օգտագործման դեպքում առաջացած խախտումները, կամ որևէ ապրանք, որը արդյունք է Ապրանքների կամ դրանց մասերի և Մատակարարի կողմից չտրամադրված այլ սարքավորման, կայանքի կամ նյութերի հետ համակցության՝ համաձայն Պայմանագրի:

29.2 Եթե Գնորդին ՊԸՊ-ի 29.1 ենթակետի շրջանակում , Գնորդի դեմ ներկայացվում է հայտ կամ պահանջ, ապա Գնորդը անամիջապես տեղեկացնի դրա մասին Մատակարարին, որը իր հաշվին և Գնորդի անունից կարող է զբաղվել այդ  այդ պահանջով կամ հայտով կամ վարի դրա հետ կապված ցանկացած բանակցություն՝ խնդիրը կարգավորելու նպատակով:

29.3 Եթե Մատակարարը այդպիսի ծանուցման ստացման պահից քսանութ (28) օրվա ընթացքում չի ծանուցում Գնորդին, որ մտադիր է զբաղվել այդ ներկայացված հայտի կամ պահանջի գործով, ապա Գնորդը ինքնուրույն կարող է այն կատարել իր հայեցողությամբ:

29.4 Գնորդը, Մատակարի խնդրանքով, կտրամադրի ամեն հնարավոր աջակցություն Մատակարարին բոլոր այդպիսի գործողությունների կամ բողոքների վարույթի ժամանակ, և փոխհատուցում կստանա Մատակարարի կողմից բոլոր առաջացած հիմնավոր ծախսերի համար:

29.5 Գնորդը կապահովագրի և զերծ պահի Մատակարարին

կամ իր աշխատակազմին և ենթակապալառուներին վնասներից, վարչական գործողություններից, բողոքներից, պահանջներից, կորուստներից, ծախսերից և ցանկացած տեսակի ծախսերից, ներառյալ՝ արտոնագրային հավատարմատարի ծախսերը, որոնք կարող են առաջանալ Մատակարարի մոտ արտոնագրի, օգտակար մոդելի, գրանցված նմուշի, ապրանքանիշի, հեղինակային իրավունքի կամ այլ տեսակի մտավոր սեփականության իրավունքների խախտումների պատճառով, որոնք գրանցված են կամ առկա են Պայմանագրի ստորագրման պահին, և որոնք առաջացել են մոդելի, տվյալների, գծագրերի, մասնագրերի կամ այլ փաստաթղթերի հետ կապված՝ մշակված կամ տրամադրված Գնորդի կողմից կամ իր անունից:

**30 Պատասխանատվության սահմանափակումներ**

30.1 Բացառությամբ հանցավոր անփութության, կանխամտածված անօրինական վարքի դեպքերի՝

(ա) Մատակարարը որևէ կերպ պատասխանատու չէ Գնորդի առաջ անուղղակի կամ կողմնակի կորուստների և վնասների, արտադրության, օգտագործման հետ կապված կամ շահույթի կամ տոկոսագումարի կորուստների համար, որոնք կառաջանան պայմանագրի կատարման ընթացքում, իրավախախտման հետևանքով կամ որևէ այլ ձևով: Սա կիրառելի է այն դեպքում, երբ այս բացառությունը չի վերաբերում Մատակարարի կողմից Գնորդին գնահատված վնասահատուցում վճարելու որևէ պարտավորվածությանը, և

(բ) Մատակարարի ամբողջ պատասխանատվությունը Գնորդի հանդեպ, որը առաջացել է Պայմանգրի շրջանակներում, իրավախախտման հետևանքով կամ որևէ այլ ձևով, չպետք է գերազանցի Պայմանագրի Ընդհանուր Արժեքը՝ պայմանով, որ այս սահմանափակումը չի վերաբերում թերություններով և անսարքություններով Ապրանքների փոխարինմանը կամ նորոգմանը, կամ արտոնագրային իրավախախտումներին

վերաբերող գնորդի հանդեպ մատակարարի որևէ պարտավորություններին:

**32. Ֆորս Մաժոր**

32.1 Մատակարարը չի կրում պատասխանատվություն պայմանագրային երաշխիքի բռնագրավման, գնահատված վնասահատուցման կամ չվճարման պատճառով դադարեցման համար, եթե Պայմանագրի շրջանակներում պայմանների կատարման ուշացումը կամ պարտականությունների չկատարումը հանդիսանում է Ֆորս Մաժորային հանգամանքների հետևանք:

32.2 Սույն դրույթի նպատակների համար, Ֆորս Մաժոր նշանակում է մի իրավիճակ կամ իրադարձություն, որը անկանխատեսելի է, անխուսափելի և դուրս է Մատակարարի վերահսկողությունից, և որը տեղի չի ունեցել Մատակարարի անփութության կամ անուշադրության պատճառով: Այդպիսի իրադարձություններ կարող են համարվել (առանց սահմանափակումների) պատերազմերը, հեղափոխությունները, հրդեհները, ջրհեղեղները, համաճարակները, կարանտինային սահմանափակումները և առաքման էմբարգոները:

32.3 Ֆորս Մաժորային իրավիճակի առաջացման դեպքում, Մատակարարը պետք է անմիջապես գրավոր կերպով ծանուցի Գնորդին իրավիճակի և դրա առաջացման պատճառների մասին: Այն դեպքում, եթե Գնորդից չստացվի ոչ մի գրավոր ցուցմունք, Մատակարարը պետք է շարունակի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտականությունները այնքանով, որքանով դա հնարավոր է, և պետք է օգտագործի Ֆորս Մաժորային հանգամանքներից դուրս բոլոր այլընտրանքային հնարավորությունները:

**33. Փոփոխության հայտեր և Պայմանագրի փոփոխություն**

33.1 Գնորդը կարող է ցանկացած ժամանակ կարգադրել Մատկարարին, ծանուցման միջոցով (ՊԸՊ 8-րդ դրույթ) Պայմանագրի ընդհանուր շրջանակում փոփոխություններ կատարել հետևյալի վերաբերյալ.

**ներ**

(ա) գծագրերի, նախագծերի կամ մասնագրերի, որոնց դեպքում Պայմանագրով նախատեսված Ապրանքները արտադրվում են հատուկ Գնորդի համար,

(բ) բեռնման և փաթեթավորման եղանակի,

(գ) առաքման վայրի, և

(դ) Մատակարարի կողմից տրամադրվող օժանդակ ծառայությունների:

33.2 Եթե նման փոփոխությունները հանգեցնում են արժեքային կամ ժամանակային փոփոխությունների, որոնք անհրաժեշտ են Մատակարարի կողմից Պայմանագրի պարտավորությունների կատարման համար, ապա Պայմանագրի Գինը կամ/և Առաքման/ավարտի ժամանակացույցը պետք է փոփոխվեն համապատասխանաբար: Մատակարարի կողմից կարգավորման վերաբերյալ ցանկացած հայտ պետք է հաստատվեն Մատակարարի կողմից փոփոխությունների մասին Գնորդի ծանուցումը ստանալուց հետո քսանութ (28) օրվա ընթացքում:

33.3 Մատակարարի գները այն օժանդակ ծառայությունների համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել, սակայն նախատեսված չեն Պայմանագրով, նախօրոք կհամաձայնեցվեն կողմերի կողմից և չեն գերազանցի Մատակարարի կողմից նմանատիպ ծառայությունների համար այլ կողմերի համար նշանակված գերակշռող դրույքները:

33.4 Ելնելով վերոնշյալից՝ Պայմանագրի պայմաններում ոչ մի փոփոխություն չի կատարվի, բացի կողմերի ստորագրություններով հաստատված գրավոր փոփոխություններից:

**34. Ժամկետի երկարաձգում**

34.1 Եթե Պայմանագրի կատարման ընթացքում Մատակարարը կամ նրա ենթակապալառուները դժվարություններ ունենան ժամանակին այդ ապրանքների առաքման և ծառայությունների կատարման հետ կապված, համաձայն ՊԸՊ 13 դրույթի, ապա Մատակարարը անհապաղ այդ փաստի մասին

գրավոր կերպով կծանուցի Գնորդին ուշացման պատճառների և հավանական ժամկետների մասին: Այդ ծանուցումը ստանալուց հետո հնարավոր կարճ ժամկետում Գնորդը կգնահատի ստեղծված իրավիճակը և իր հայեցողությամբ կարող է երկարաձգել աշխատանքները իրականացնելու համար մատակարարին հատկացված ժամանակը, ինչի դեպքում երկարաձգումը կհաստատվի կողմերի կողմից՝ Պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով:

34.2 Բացառությամբ Ֆորս մաժոր դեպքերի, որոնք նշված են ՊԸՊ 32 դրույթում, Մատակարարի կողմից առաքման և պարտավորվածությունների կատարման ուշացման դեպքում Մատակարարը կպարտավորվի գնահատված վնասահատուցում կատարելու, ըստ ՊԸՊ-ի 26 կետի, եթե ժամկետի երկարաձգման մասին առկա չէ պայմանավորվածություն՝ ըստ ՊԸՊ-ի 34.1 կետի:

**35. Termination**

35.1 Պայմանագրի դադարեցում՝ պարտավորությունների չկատարման պատճառով

(ա) Գնորդը, չվնասելով ցանկացած այլ իրավական պաշտպանության միջոցների, կարող է ամբողջությամբ կամ մասամբ լուծել Պայմանագիրը՝ գրավոր կերպով ծանուցելով Մատակարարին նրա պարտազանցության մասին, եթե

(i) Մատակարարը նշված ժամկետում կամ համաձայն ՊԸՊ-ի 34-րդ դրույթով նրան շնորհված երկարաձգված ժամկետում չի մատակարարել ցանկացած կամ բոլոր Ապրանքները;

(ii) Մատակարարը չի կատարել սույն Պայմանագրով ամրագրված որևէ այլ պարտականություն; կամ

(iii) եթե Մատակարարը Գնորդի համոզմամբ Պայմանագրի համար մրցելիս, կամ Պայմանագրի իրականացման ընթացքում մասնակից է եղել կոռուպցիայի կամ

խարդախության դեպքերի՝ համաձայն ՊԸՊ 3-րդ դրույթի:

(a) (բ) Այն դեպքում, եթե Գնորդը մասամբ կամ ամբողջովին լուծում է Պայմանագիրը, համաձայն ՊԸՊ-ի Հոդված 35.1 (ա)-ի, ապա Գնորդը կարող է իրեն հարմար պայմաններով և եղանակով գնել չմատակարարված նույնատիպ Ապրանքներ և նույնատիպ չմատուցված Ծառայություններ և այդ դեպքում Մատակարարը պատասխանատվություն է կրում Գնորդի առջև բոլոր լրացուցիչ ծախսերի համար: Սակայն, Մատակարարը պետք է շարունակի պայմանագրի կատարումը այն մասով, որը չէր լուծվել:

35.2 Անվճարունակության հետևանքով պայմանագրի լուծում

ա) Գնորդը կարող է ցանկացած պահին լուծել Պայմանագիրը, գրավոր կերպով ծանուցելով Մատակարարին, եթե Մատակարարը ճանաչվում է սնանկ կամ անվճարունակ: Այս դեպքում, լուծումը կատարվում է առանց Մատակարարին որևէ փախհատուցում վճարելու, և այն պայմանով, որ այդպիսի լուծումը չի վնասի կամ ազդի Գնորդի գործելու կամ իրավական պաշտպանության միջոցի, որը արդեն առկա է կամ կառաջանա հետագայում:

35.3 Պայմանագրի լուծում Գնորդի նախաձեռնությամբ

(ա) Գնորդը, իր նախաձեռնությամբ, կարող է մասամբ կամ ամբողջությամբ լուծել Պայմանագիրը ցանկացած պահին՝ ծանուցելով այդ մասին Մատակարարին: Լուծման մասին ծանուցման մեջ նշված կլինի, որ դադարեցումը կատարվել է Գնորդի կողմից՝ նպատակահարմարության պատճառներով, ինչպես նաև լուծման ենթակա Մատակարարի աշխատանքների ծավալը ըստ Պայմանագրի և լուծման ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

(բ) Այն Ապրանքները, որոնց վերաբերող աշխատանքները ավարտվում են և որոնք պատրաստ են փոխադրման Մատակարարի կողմից ծանուցումը

ստանալուց հետո 28 օրվա ընթացքում պետք է ընդունվեն Գնորդի կողմից՝ Պայմանագրում ամրագրված գներով և պայմաններով: Մնացած Ապրանքների համար Գնորդը կարող է իր հայեցողությամբ.

(i) համաձայնվել մնացած Ապրանքների ցանկացած մասի առաքմանը՝ Պայմանագրում նշված գնի և պայմանների համաձայն, և/կամ

(ii) հրաժարվել մնացած Ապրանքներից և վճարել Մատակարարին մասամբ պատրաստ Ապրանքների և Ծառայությունների համար համաձայնեցված գումար, ինչպես նաև վճարել Մատակարարի կողմից նախապես գնված նյութերի և պահեստամասերի համար:

**Իրավափոխանցում** 36.1 Գնորդը և Մատակարարը չեն փոխանցի իրենց՝ սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ կամ մասամբ, եթե դրա վերաբերյալ մյուս կողմի նախնական գրավոր համաձայնությունը առկա չէ:

# ՀԱՎԵԼՎԱԾ
# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

## Բանկի քաղաքականություն

## Խարդախ և կոռուպցիոն գործելակերպեր

*(Սույն Հավելվածում տեքստը չպետք է փոփոխել)*

2011թ.-ի հունվարին Համաշխարհային Բանկի Վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման ուղենիշներ ՎՁՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում:

“**Խարդախություն և կոռուպցիա**

1.16 Ըստ Բանկի քաղաքականության պահանջվում է, որ Վարկառուները (ներառյալ Բանկի վարկերի շահառուները), հայտատուները, մատակարարները, կապալառուները և իրենց գործակալները (հայտարարագրված կամ ոչ), ենթակապալառուները, ենթախորհրդատուները, ծառայություններ մատուցողները կամ մատակարարները և աշխատակազմի որևէ անդամ, հետևեն էթիկայի բարձրագույն չափանիշին Բանկի կողմից ֆինանսավորված պայմանագրերի գնումների և իրականացման ընթացքում:[9] Հետամուտ լինելով սույն քաղաքականությանը՝ Բանկը.

[9] Այս համատեքստում ցանկացած գործողություն, որն անպատեհ ազդում է գնումների գործընթացի կամ պայմանագրի կատարման վրա, որպես առավելություն, համարվում է անտեղին:

[3] Սույն ենթապարբերության նպատակով «*այլ կողմ*» նշանակում է պետական պաշտոնյայի, որի գործողությունը կապված է գնումների գործընթացի կամ պայմանագրի իրականացման հետ: Այս համատեքստում «*պետական պաշտոնյա*» նշանակում է Համաշխարհային Բանկի աշխատակազմ և այլ կազմակերպությունների աշխատակիցներ, որոնք ընդունում կամ վերանայում են գնումների հետ կապված պաշտոնական որոշումները:

[4] Սույն ենթապարբերության նպատակով «Կողմ» վերաբերում է պետական պաշտոնյաի. «օգուտ» և «պարտավորություն» եզրերը վերաբերվում են գնումների գործընթացին կամ պայմանագրի իրականացմանը. և «գործողությունը կամ բացթողումը» ենթադրում է ազդեցություն գնումների գործընթացի կամ պայմանագրի իրականացման վրա:

սույն դրույթի նպատակներով սահմանում է հետևյալ պայմանները.

(i) □կոռուպցիոն գործելակերպը□ այլ կողմի[10] գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու նպատակով ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ արժեք ներկայացնող որևէ բան առաջարկելն է, տալը, ստանալը կամ պահանջելը,

(ii) □խարդախ գործելակերպ□ նշանակում է ցանկացած գործողություն կամ բացթողում, ներառյալ փաստերի սխալ ներկայացնելը, որը միտումնավոր կամ ոչ միտումնավոր ձևով փորձում է մոլորության մեջ գցել կողմին՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու նպատակով կամ պարտավորությունից խուսափելու համար[11],

(iii) «նախապես գաղտնի համաձայնեցում» նշանակում է երկու կամ ավելի կողմերի [12] միջև համաձայնության ձեռք բերում անօրեն նպատակների հասնելու համար՝ ներառյալ այլ կողմի գործունեության վրա անօրեն կերպով ազդելը;

(iv) «հարկադրանք» նշանակում է ուղղակի կամ անուղղակի կերպով վնաս հասցնել կամ սպառնալ վնասել այլ կողմի կամ կողմի սեփականությանը՝ կողմի[13] գործունեության վրա անօրեն կերպով ազդելու նպատակով;

(v) «խոչընդոտում» նշանակում է

(աա) հետաքննության նյութերը միտումնավոր վերացնելը, փոփոխելը, կեղծելը կամ թաքցնելը կամ սուտ վկայություններ տալը՝ ըստ էության խոչընդոտելու Բանկի կողմից իրականացվող հետաքննությանը, որը վերաբերում է կոռուպցիայի, խարդախության, հարկադրանքի և գաղտնի համաձայնության մասին հայտարարություններին; և/կամ

---

[5] Սույն ենթապարբերության նպատակով «Կողմեր» վերաբերվում է գնումների գործընթացի մասնակիցներին (ներառյալ պետական պաշտոնյաների), որոնք փորձում են առաջարկների գները սահմանել արհեստական, ոչ մրցակցային մակարդակում և մասնակցում են մեկը մյուսի հայտի գներին կամ այլ պայմաններին:

[6] Սույն ենթապարբերության նպատակով «Կողմ» վերաբերում է գնումների կամ պայմանագրի իրականացման գործընթացի մասնակցին:

սպառնալ, հետապնդել կամ ահաբեկել ցանկացած կողմի՝ խոչընդոտելու նրան տարածելու տեղեկություններ հետաքննությանը վերաբերող նյութերի մասին կամ հետաքննություն պահանջելու; կամ

(բբ) գործողություններ, որոնք միտված են ըստ էության խոչընդոտելու Բանկի կողմից հետաքննության և աուդիտի իրականացումը՝ նախատեսված 1.16 (ե)ենթակետով ստորև:

(b) կմերժի առաջարկը պայմանագրի շնորհման համար, եթե որոշում է, որ հայտատուն, կամ նրա աշխատակազմը կամ իր գործակալները կամ իր ենթախորհրդատուները, ենթակապալառուները, ծառայություն մատուցողները, մատակարարները և (կամ) իրենց աշխատակիցները, որոնք երաշխավորված է պայմանագրի շնորհման համար տվյալ պայմանագրի համար մրցելիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավվել են կոռուպցիոն, կեղծ, խարդախ, հարկադիր կամ խոչընդոտող գործելակերպերում,

(c) կհայտարարի սխալ գնումներ և չեղյալ կհայտարարի վարկի այն մասը, որը հատկացված է պայմանագրի, եթե այն որոշում է, որ վարկից որևէ եկամուտներ ստացողի կամ Վարկառուի ներկայացուցիչները ցանկացած պահին ներգրավված են կոռուպցիոն, կեղծ, խարդախ, հարկադիր կամ խոչընդոտող գործելակերպերում տվյալ պայմանագրի գնումների կամ իրականացման ընթացքում առանց Վարկառուի կողմից ձեռնարկված ժամանակին և համապատասխան միջոցառումների, որոնք բավարարում են Բանկի պահանջները՝ անդրադառնալու այդ գործելակերպերին, երբ դրանք տեղի են ունենում, ներառյալ Բանկին ժամանակին չտեղեկացնելը այդ գործելակերպերի մասին, երբ դրանց մասին իրենք տեղեկացվում են,

(d) ցանկացած պահին պատժամիջոցներ կկիրառի ընկերության կամ անհատի նկատմամբ համաձայն Բանկի պատժամիջոցների կիրառության ընթացակարգերի[14], այդ թվում՝ հրապարակայնորեն

[14] Ընկերությունը կամ անհատը կարող է հայտարարվել, որ ընդունելի չէ Բանկի կողմից ֆինանսավորվող համաձայնագիր շնորհվելու համար (i) Բանկի կողմից պատժամիջոցների վարույթներն ավարտելուց հետո՝ համաձայն Բանկի կողմից կիրառվող պատժամիջոցների կիրառության ընթացակարգերի, ներառյալ նաև խաչաձև արգելքը՝ համաձայնեցված Միջազգային այլ ֆինանսական հաստատությունների հետ, այդ թվում՝ Բազմակողմանի զարգացման բանկերի հետ, և Համաշխարհային Բանկի Խմբի կողմից սահմանված կեղծիքի և կոռուպցիայի միասնական վարչական գնումների պատժամիջոցների ընթացակարգերի կիրառությամբ, և (ii) ժամանակավոր կասեցման կամ ժամանակավոր վաղ կասեցման

հայտարարելով, որ այդ ընկերությունը կամ անհատը ընդունելի չէ, ոչ անորոշ և ոչ էլ որոշակի ժամանակահատվածի համար (i) շնորհվել Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագիր, և (ii) առաջադրված լինել[15],

(e) կպահանջի, որ մրցութային փաստաթղթերում ներառվի մի դրույթ և Բանկի վարկով ֆինանսավորվող պայմանագրերում, որոնք պահանջում են հայտատուներ, մատակարարներ և կապալառուներ և իրենց ենթակապալառուները, գործակալները, անձնակազմը, խորհրդատուները, ծառայություն մատուցողները կամ մատակարարները, թույլատրելու Բանկին ստուգել բոլոր հաշիվները, փաստաթղթերը և հայտերի ներկայացման և պայմանագրի կատարման հետ կապված այլ փաստաթղթեր և ստուգել դրանք Բանկի ստուգողների կողմից¦:

արդյունքում՝ կապված պատժամիջոցների շարունակական վարույթի հետ: Տես ստորև բերված 14-րդ ծանոթագրությունը և սույն Ուղենիշների Հավելված 1-ի 8-րդ պարբերությունը:

15 Առաջադրված ենթակապալառուն, խորհրդատուն, արտադրողը կամ մատակարարը կամ ծառայություն մատուցողը (տարբեր անուններ են օգտագործվում՝ կախված տվյալ մրցութային փաստաթղթից) կամ (i) ներգրավված է եղել հայտի նախաորակավորման իր դիմումի կամ հայտի մեջ, քանի որ նա տիրապետում է կոնկրետ կարևոր փորձի և գիտելիքների, որոնք թույլ են տալիս հայտատուին բավարարել տվյալ հայտի որակավորման պահանջները, կամ (ii) նշանակված է Վարկառուի կողմից:

# Բաժին X.  Պայմանագրի ձևեր

Այս բաժինը ներառում է ձևեր, որոնք լրացնելուց հետո կազմում են Պայմանագրի մաս: Աշխատանքների կատարման երաշխիքի և կանխավճարի երաշխիքի ձևերը, անհրաժեշտության դեպքում, լրացվելու են միայն հաղթող ճանաչված Հայտատուի կողմից պայմանագիրը շնորհելուց հետո:

## Ձևերի աղյուսակ

**Աշխատանքների ընդունման նամակ.........................................................................**

**Պայմանագիր..............................................................................................................**

**Պայմանագրի կատարման երաշխիք .......................................................................**

**(Բանկային երաշխիք)................................................................................................**

# Աշխատանքների ընդունման նամակ

*[Գնորդի ձևաթուղթ]*

*[ամսաթիվ]*

ՈՒմ՝ *[Մատակարարի անունը և հասցեն]*

Թեման՝ ***No. Պայմանագրի շնորհման ծանուցում***. . . . . . . . . .

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Ձեր Հայտը, ***[գրել ամսաթիվը]*** ***....................................[գրել պայմանագրի անվանումը և նույնականացման համարը, ինչպես նշված է ՊՀՊ-ում]*** կատարման համար . . . . . . . . . . . . . . . . . . Պայմանագրի Ընդունված գնի համար ***[գրել գումարը թվերով և բառերով և արժույթի անվանումով]***, ինչպես ճշգրտված և փոփոխված է՝ համաձայն Հայտատուներին տրված ցուցումներով, սույնով ընդունվում է մեր Գործակալության կողմից:

Խնդրվում է տրամադրել Աշխատանքի կատարման երաշխիքը 28 օրվա ընթացքում՝ համաձայն Պայմանագրի պայմանների, այդ նպատակով օգտագործելով Աշխատանքի կատարման երաշխիքի ձևը, որը ներառված է Մրցութային փաստաթղթերի Պայմանագրի ձևերում (Բաժին X):

Լիազոր անձի ստորագրություն՝ ________________________________________
Ստորագրողի անունը և պաշտոնը՝ ______________________________________
Գործակալության անվանումը՝ ________________________________________

**Կից՝ Պայմանագիրը**

# Պայմանագիր

*[Շահող Հայտատուն պետք է լրացնի սույն ձևը՝ մատնանշված ցուցումների համաձայն:]*

ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼ Է

*[ գրել՝* ***օր*** *], [* ***ամիս*** *], [* ***տարի*** *]:*

(1) *[Գրել Գնորդի ամբողջական անվանումը], [գրել իրավական միավորի նկարագրությունը, օրինակ՝ ------------ նախարարության գործակալության անվանումը {գրել Գնորդի երկրի անվանումը}, կամ կորպորացիա, որը ստեղծված է {գրել Գնորդի երկրի անվանումը}օրենսդրության համաձայն, որի գլխամասային գրասենյակը՝ [գրել Գնորդի հասցեն] (հետայսու՝ «Գնորդ»), մի կողմից, և*

(2) *[Գրել Մատակարարի անվանումը ]*, կորպորացիա՝ ստեղծված [*գրել Մատակարարի երկրի անվանումը*] օրենքների համաձայն, որի գործունեության հիմնական վայրը *[գրել Մատակարարի հասցեն]* (հետայսու՝ «Մատակարար»), մյուս կողմից

Կամ

*[Եթե մատակարարը բաղկացած է մեկից ավել սուբյեկտից ՀՁ-ի ձևով,* ապա Համատեղ Ձեռնարկությունը (*գրել ՀՁ-ի անվանումը*) բաղկացած լինելով հետևյալ սուբյեկտներից *[գրել ՀՁ Գործընկերոջ անունը]*, կորպորացիա, որը գործում է օրենքներով՝ *[ գրել ՀՁ գործընկերոջ երկրի անունը]* իր հիմնական գործունեությունն իրականացնելով *[գրել ՀՁ Գործընկերոջ հասցեն ---------------և ------------- ]*, որի յուրաքանչյուր անդամ համատեղ և առանձին ենթակա են լինելու Գնորդին սույն Պայմանագրով նախատեսված Մատակարարի բոլոր պարտավորությունների համար, (հետայսու՝ *«Մատակարար»*), մյուս կողմից

ՄԻՋԵՎ:

ՄԻՆՉԴԵՌ Գնորդը հայտերի ներկայացման հրավեր է ներկայացրել որոշակի Ապրանքների և օժանդակ ծառայությունների համար [*գրել Ապրանքների և ծառայությունների սեղմ նկարագիրը*] և Մատակարարի կողմից ստացել է Հայտ՝ այդ Ապրանքների և Ծառայությունների մատակարարման համար:

Գնորդը և Մատակարարը համաձայնության են գալիս հետևյալի մասին.

1. Սույն Պայմանագրում բառերը և բառակապակցությունները պետք է ունենան նույն իմաստը, ինչ ունեն Պայմանագրի փաստաթղթերում:

2. Հետևյալ փաստաթղթերը պետք է ընթերցվեն և մեկնաբանվեն որպես սույն Պայմանագրի անբաժանելի մաս: Սույն Պայմանագիրը պետք է գերակայություն ունենա պայմանագրի բոլոր փաստաթղթերի նկատմամբ:

   (a) Ընդունման նամակ,

   (b) Հայտադիմում

   (c) Հավելվածների համարներ ___ (եթե կան),

   (d) Պայմանագրի հատուկ պայմաններ,

   (e) Պայմանագրի ընդհանուր պայմաններ,

   (f) Տեխնիկական պահանջներ, (ներառյալ պահանջների ժամանակացույցը և տեխնիկական մասնագրերը),

   (g) Լրացված ժամանակացույցները (ներառյալ գնացուցակները),

   (h) Պայմանագրի մաս կազմող որևէ այլ փաստաթուղթ, որը նշված է ՊԸՊ-ում:

3. Գնորդի կողմից Մատակարարին կատարվող վճարումների համատեքստում Մատակարարը պայմանավորվում է Գնորդի հետ մատակարարել Ապրանքները և Ծառայությունները և Պայմանագրի դրույթների համաձայն վերացնել բոլոր թերությունները:

5. Գնորդը սույնով համաձայնում է մատակարարված Ապրանքների և Ծառայությունների և թերությունների վերացման դիմաց Մատակարարին վճարել Պայմանագրի գինը կամ նման այլ գումար, որը ենթակա է վճարման Պայմանագրի դրույթների համաձայն այն ժամանակ և այն ձևով, որը նախանշված է Պայմանագրի շրջանակներում:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈՆՇՅԱԼԻ կողմերը կնքել են սույն Պայմանագիրը, որը պետք է իրականացվի *Գնորդի երկրի* օրենքների համաձայն՝ վերոնշյալ օրը, ամիսը, տարին:

Գնորդի կողմից՝

Ստորագրեց՝ *[Ստորագրություն]*
Պաշտոնը *[ Գրել պաշտոն և համապատասխան այլ անվանում]*
Ներկայությամբ [*Գրել պաշտոնական վկայի տվյալները]*

Մատակարարի կողմից՝

Ստորագրեց՝ *[Ստորագրություն]*
Պաշտոնը *[ Գրել պաշտոն և համապատասխան այլ անվանում]*
Ներկայությամբ [*Գրել պաշտոնական վկայի տվյալները]*

# Պայմանագրի կատարման երաշխիք

## (Բանկային երաշխիք)

*[Բանկը պետք է լրացնի այս Բանկային երաշխիքի ձևը՝ ստորև նշված ցուցումների համաձայն]*

*[Երաշխավորողի ձևաթղթով նամակ կամ SWIFT կոդը]*

**Շահառու՝** *[Գնորդի անուն և հասցե]*

**Ամսաթիվ՝** *[տրամադրման ամսաթիվը]*

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ No.** *[Երաշխավորողի համարը]*

**Երաշխավորող:** *[Հարցի անվանումը և հասցեն, եթե նշված չէ ձևաթղթում]*

Մենք տեղեկացվել ենք, որ [*Մատակարարի անունը, համատեղ ձեռնարկության դեպքում՝ համատեղ ձեռնարկության անվանումը*] (այսուհետ՝ «Դիմող») Պայմանագիր է կնքել՝ թվագրված *[ամսաթիվը]* Շահառուի հետ *[Պայմանագրի անունը և Ապրանքների և հարակից ծառայությունների համառոտ նկարագրությունը]* մատակարարման համար (այսուհետ՝ «Պայմանագիր»):

Ավելին, գտակցում ենք, որ, համաձայն Պայմանագրի պայմանների, պահանջվում է կատարման երաշխիք:

Դիմողի խնդրանքով սույնով մենք որպես Երաշխավոր, անչեղարկելիորեն պարտավորվում ենք ձեզ վճարել ցանկացած գումար/ներ, որոնք չեն գերազանցի *[գրել գումարը(ները*[1]*) թվերով և բառերով]* Շահառուի պահանջի դեպքում, որը ուղեկցվում է Շահառուի տեղեկանքով, պահանջը ինքնին կամ ուղեկցվող առանձին ստորագրված կամ պահանջը նշող փաստաթղթով, որով կնշվի, որ Դիմողը Պայմանագրի շրջանակում չի կատարել պայմանագրային իր պարտավորություն(ներ)ը՝ առանց փաստարկների, կամ ձեր պահանջի կամ պահանջով ներկայացվող գումարի համար հիմնավորում կամ պատճառաբանություն ներկայացնելու:

---

[1] *Երաշխավորը պետք է գրի այն գումարը, որը ներկայացնում է Ընդունված պայմանագրային գումարի տոկոսը, որը նշված է Ընդունման նամակում, և նշվում է կամ Պայմանագրի արժույթ(ներ)ով կամ Շահառուի համար ազատ փոխարկելի արժույթով:*

Այս երաշխիքի ժամկետը կլրանա ոչ ուշ քան *[գրել օրը], [ամիսը], [տարին],*[2] և վերջինիս շրջանակներում վճարման ցանկացած պահանջ պետք է մեզ ներկայացնել վերոնշյալ հասցեով կամ տվյալ օրը, կամ դրանից առաջ:

Սույն Երաշխիքը ենթակա է Ցպահանջ երաշխիքների միասնական կանոններին (URDG) 2010, ICC հրապարակում No. 758, բացառությամբ հոդված 15 (ա) ենթակետով հիմնավորող փաստաթուղթը չի ներառվում:

_____________________________

*[ստորագրություն(ներ)]*

***Ծանոթություն. շեղագիր ամբողջ տեքստը նախատեսված է սույն ձևը լրացնելու համար է և պետք է ջնջել վերջնական փաստաթղթից:***

---

*2. Գրել ամսաթիվը ՊԸՊ 18.4 դրույթում նկարագրված ավարտի ամսաթվերից քսանութ օր հետո: Գնորդը պետք է նշի, որ Պայմանագրի իրականացման այդ ժամկետի երարաձգման դեպքում Գնորդը պետք է Երաշխավորից խնդրի այդ երաշխիքի երկարաձգում: Նման խնդրանքը պետք է լինի գրավոր և պետք է կատարվի նախքան երաշխիքում նշված գործողության ժամկետի ավարտի օրը: Սույն երաշխիքը պատրաստելիս Գնորդը կարող է հետևյալ տեքստը հավելել ձևին՝ նախավերջին պարբերության վերջում. □Երաշխավորը համաձայն է սույն երաշխիքը երկարաձգել մեկ անգամ՝ {վեց ամիսը} {մեկ տարին} չգերազանցող ժամկետով՝ ի պատասխան Շահառուի՝ այդ երկարաձգման գրավոր խնդրանքի-դիմումի, որը պետք է ներկայացվի Երաշխավորին մինչ երաշխիքի ժամկետի ավարտը□:*

# Կանխավճարի բանկային երաշխիք

*[Երաշխավորողի ձևաթղթով նամակ կամ SWIFT կոդը]*

**Շահառու`** *[Գնորդի անուն և հասցե]*

**Ամսաթիվ`** *[տրամադրման ամսաթիվը]*

**ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ No.** *[Երաշխավորողի համարը]*

**Երաշխավորող:** *[Հարցի անվանումը և հասցեն, եթե նշված չէ ձևաթղթում]*

Մենք տեղեկացվել ենք, որ [*Մատակարարի անունը, համատեղ ձեռնարկության դեպքում՝ համատեղ ձեռնարկության անվանումը*] (այսուհետ՝ «Դիմող») Պայմանագիր է կնքել՝ թվագրված *[ամսաթիվը]* Շահառուի հետ *[Պայմանագրի անունը և Ապրանքների և հարակից ծառայությունների համառոտ նկարագրությունը]* մատակարարման համար (այսուհետ՝ «Պայմանագիր»):

Ավելին, զտակցում ենք,, որ, համաձայն Պայմանագրի պայմանների, պահանջվում է կանխավճար *[գրել գումարը թվերով]* () *[գրել գումարը բառերով]* Պայմանագրի արժույթով, որը պետք է կատարել կանխավճարի երաշխիքի դիմաց:

Դիմողի խնդրանքով սույնով մենք որպես Երաշխավոր, անչեղարկելիորեն պարտավորվում ենք ձեզ վճարել ցանկացած գումար/ներ, որոնք չեն գերազանցի *[գրել գումարը(ները[1]) թվերով և բառերով]* Շահառուի պահանջի դեպքում, որը ուղեկցվում է Շահառուի տեղեկանքով, պահանջը ինքնին կամ ուղեկցվող առանձին ստորագրված կամ պահանջը նշող փաստաթղթով, որով կնշվի, որ Դիմողը

(a) Կանխավճարը կիրառել է այլ նպատականերով,բացի Ապրանքների առաքումից, կամ

(b) Չի վճարել կանխավճարը Պայմանագրի պայմանների համաձայն՝ նշելով այն գումարը որը Դիմողը չի վճարել:

---

[1] *Երաշխավորը պետք է գրի այն գումարը, որը ներկայացնում է կանխավճարի գումարը և արտահայտված է Գնորդի երկրի արժույթով:*

Սույն երաշխիքով պահանջը կարող է ներկայացվել որպես Շահառուի բանկի վկայական Երաշխավորողին՝ նշելով, որ վերոնշյալ կանխավճարը փոխանցվել է Դիմողին՝ նրա հաշվեհամարին *[գրել համարը] [գրել Դիմողի բանկի անունը և հասցեն]:*

Սույն Երաշխիքը ենթակա է Ցպահանջ երաշխիքների միասնական կանոններին (URDG) 2010, ICC հրապարակում No. 758, բացառությամբ հոդված 15 (ա) ենթակետով հիմնավորող փաստաթուղթը չի ներառվում:

_____________________

*[ստորագրություն(ներ)]*

